# ՀԱՅԵՐԸ ՀԻՍԻՍԱՅԻՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷՈՒՄ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Սոյն հաղորդման մէջ ի մի են բերուած պատմական եւ մշակութային ցաքուցրիւ փաստեր, որ վերաբերում են հիւսիսային, կենտրոնական եւ հարաւային Ափրիկէի երկրների հետ հայերի ունեցած առնչութիւններին: Մեր տեսադաշտից դուրս ենք թողել Եգիպտոսի, Եթովպիայի եւ Սուդանի հետ հայ ժողովրդի ունեցած կապերի եւ հայ համայնքի պատմութիւնը, որոնք բազմիցս ուսումնասիրուել եւ հետազօտուել են[1]:

Վաղ միջնադարում եւ յետագայ դարերում հայերը բազմապիսի առնչութիւններ են ունեցել Ափրիկէում բնակուող ժողովուրդների հետ՝ բիւզանդական պատերազմների, առեւտրի, ինչպէս նաեւ հայ գաղթօջախների հաստատման հետեւանքով: Մասնաւորապէս այլազան շփումներ են եղել Եթովպիայի եւ եթովպացիների (հաբէշների) հետ, որոնց հայերն անուանել են խափշիկ: Յետագայում այս անուանումը տարածուել է առհասարակ բոլոր սեւամորթների վրայ...

## ՀԻՍԻՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Հայերի ներկայութիւնը հիւսիսային Ափրիկէում (ներկայիս Լիբիա, Ալժիր, Թունիս եւ Մարոկկո երկրները) շատ հին է: Այս թեմային անդրադարձել է Հրաչեայ Աճառեանը[2], որից էլ օգտուելով՝ նոյն տուեալները կրկնել է նաեւ պատմաբան Աշոտ Աբրահամեանը[3]:

Հիւսիսային Ափրիկէի հետ հայ ժողովրդի ունեցած վաղնջական աղերսը վերաբերում է մի հաւանաբար կիսաառասպելական պատմութեան, որն աւանդել է հռոմէացի պատմիչ Գայիոս Սալիւստիուս Կրիսպուսը *Եուգուրտական Պատերազմը* աշխատութեան մէջ: Այդ պատերազմը տեղի է ունեցել Ք. ա. 115-105ին, Հռոմի եւ Ափրիկէի տարածքում գտնուող Նումիդիա պետութեան միջեւ եւ յայտնի է Նումիդիայի թագաւոր Եուգուրտայի (կամ Եուգուրտէնի, մօտ 160-104 Ք.ա.) անունով: Հռոմէացի պատմիչի վկայութեամբ՝ հայերը մասնակցութիւն են ունեցել մաւր ժողովրդի կազմաւորման մէջ: Նկատի ունենալով, որ այդ հետաքրքիր հատուածը տեղ չի գտել *Հայ Ժողովրդի Պատմութեան Քրեստոմատիայ*ի առաջին հատորում (Երեւան, 1981), այն բերում ենք ամբողջութեամբ. «*Նախնի բնակիչք Ափրիկեայ էին գետուղացիք եւ լիբէացիք՝ ազգք վայրագ եւ բիրտ.... Այլ 'ի մեռանել Հերակլի 'ի Սպանիա, որպէս ափրիկեցիքն պատմեն, անզօրավար մնացեալ բանակ նորա՝ որ խմբեալ էր 'ի բազում ազգաց, վարատեալ ցրուեցաւ վասն բազմաց անկարգս իմն եւ խառն 'ի խուռն զայնր իշխանութեան թեկնածելոյ: Ի սոցանէ Մարք, Պարսք եւ Հայք նաւեալ յԱփրիկէ, զմերձակայ գաւառս մերոյ ծովուս կալան: Բայց Պարսք.... տակաւ ամուսնութեամբ ազգախառնեալ ընդ գետուղացիս, եւ զի յաճախ 'ի խնդիր լաւագունից վայրաց աստանդականք շրջէին, վասն որոյ եւ նումիդացիս զինքեանցս կոչեցին: ....Իսկ Մարք եւ Հայք յաւելեալ 'ի լիբէացիս (զի սոքա 'ի ծովափնեայս անդ Ափրիկեայ թափառէին, եւ գետուղացիք առաւել եւս ընդ*

*արեգակամբ ոչ հեռի 'ի հասարակածէն), վաղ ընդ փոյթ կանգնեցին քաղաքս.... Զորոց տակաւ լիրէացիք աղաւաղեալ զանուանս 'ի խուժ բարբառ իւրեանց, զՄարս 'ի Մաւրիս փոխեցին»*[4]:

Այսպիսով, հռոմէացի պատմիչի վկայութեամբ, Ք.ա. Առաջաւոր Ասիայի երկու հնագոյն ժողովուրդներ՝ հայերը եւ մարերը, սկսնաւորել են Օթելլոյի ցեղը...:

Ափրիկէի հիւսիս շատ անգամ հասել են հիմնականում Բիւզանդական Կայսրութեան եւ Եգիպտոսի հայազգի ռազմական գործիչներ: Այսպէս, երբ 545ին կայսրութեան նահանգ Հիւսիսային Ափրիկէն ապստամբել է Բիւզանդիայի Յուստինիանոս կայսեր դէմ՝ Գոնթարիսի ղեկավարութեամբ, կայսրը նրա դէմ ուղարկել է մի զօրք, որի մէջ եղել է հայկական գունդ՝ Արովբինդ Ծերակուտականի հրամանատարութեամբ, որի կազմում էին զօրավար Արտաւան (Արտաւազդ-Արտաբանէս) Արշակունին, նրա եղբայր Վահանը, Գրիգոր եղբօրորդին եւ ազգական Արտաշիրը: Գոնթարիսը, մաւրիտանացիների հետ միաւորուած, յաղթել է յոյներին: Արտաւանը եւ միւս հայերը առերես նրան յայտնել են իրենց գինակցութիւնը՝ շահելով Գոնթարիսի վստահութիւնը, որը հայկական գնդին ուղարկել է իր դէմ ապստամբած մաւրիտանացիներին ճնշելու: Պատերազմից յետոյ Կարթագէնում/Կարկեթոնում (Թունիս) խնջոյքի պահին Արտաւանը հայ գինուորների հետ ոչնչացրեց Գոնթարիսին եւ իր գինակիցներին՝ այդպիսով վերականգնելով Յուստինիանոսի տիրապետութիւնն Ափրիկէում: Կայսրը բարձր է գնահատել հայ զօրավարի ծառայութիւնները եւ նրան նշանակել է Լիբիայի ընդհանուր կառավարիչ՝ կոչելով Ափրիկէի դուքս: Այնուհետեւ շնորհազրկուելով՝ Արտաւանը «հիւպատոս» տիտղոսով դարձել է բանակի հրամանատար: 548-549ին բանտարկուել է, ապա Թրակիայի ընդհանուր սպարապետի կոչումով ուղարկուել է Սիցիլիա՝ գոթերի դէմ: 553ին եղել է Սիցիլիայի բիւզանդական զօրքերի հրամանատար եւ տաս տարի կառավարել է կղզին[5]: Նոյն Զ. դարում Ափրիկէի հիւսիսում ռազմական առաքելութեամբ գտնուել է Նարսէս Պատրիկը (յետագայում Իտալիայի փոխարքայ):

Հիւսիսային Ափրիկէում արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում հատուկենտ հայեր են այցելել նոյնպէս այդ երկրներ: Է. դարում Մարոկկոյում է յայտնուել եգիպտական ռազմական գործիչ Ռիւսթէմ բին Բեհրամը, որը, պատմաբան Արշակ Ալպոյաճեանի ենթադրութեամբ, եղել է հայ՝ Ռոստոմ որդի Վահրամի անունով: Այս Ռիւսթէմի որդին կամ թոռը՝ Մէյմունը/Մէ'մունը, Թահերթում (Մարոկկո) հիմնել է անկախ թագաւորութիւն եւ իրեն խալիֆա է հռչակել: Նրա թագաւորութիւնը կործանուել է Ֆաթիմեան առաջին խալիֆայի՝ Մահդիի օրօք (908-933)[6]: ԺԲ. դարում Եգիպտոսի հայազգի ռազմական գործիչ Ղարաղուշ ալ Արմանին նուաճել է մի քանի քաղաքներ եւ նահանգներ ներկայիս Լիբիայի տարածքում, իսկ 1190ին Եգիպտոսը միաւորել է Ալմոհադամների պետութեան հետ (Հիւսիսային Ափրիկէ) եւ նրանց կողմից ընդունուել Թունիսում: Այստեղ հարկ է նշել, որ Թունիսը Դունիս ձեւով երկու անգամ յիշատակուած ենք գտնում արդէն ԺԳ. դարի հայ մատենագրութեան մէջ, երկուսն էլ կապուած 1270ի Մարտին Ֆրանսիայի Լիւդովիկոս թագաւորի արշաւանքին դէպի Թունիս, որի նուաճումը չի իրականացել, քանի որ զօրքի մէջ հիւանդութիւն է ընկել եւ շատերը մահացել են: Հեթում Կոռիկոսցու *Ժամանակագրութիւն*ի մէջ (1296) յիշուած է, որ Լիւդովիկոսը (Լա-

ւիզ ըռէ տը Ֆրանս) ծրագրել է արշաւել Սիրիա. իր զօրքով նախ մեկնել է Սարդինիա կղզի, «*եւ անտի խլեցան եւ գնացին ի Դունիզն եւ առժամայն առին զԳարդայճն*»[7]: Վերջինս նոյնինքն Կարթագէնն է, որ ֆրանսիացիները գրաւել են. «*Եւ յետ մահուան ըռէ տը Ֆրանսին եկն ըռէ Ջաոլն ի հեծելն եւ արար հաշտութիւն ընդ Դունիզին սուլտանն*»[8]: Նոյն ԺԳ. դարում ստեղծուած Հեթում Բ.ի *Ժամանակագրութիւն*ի մէջ կարդում ենք միեւնոյն տեղեկութիւնը. «*ՋԺԹ* (1270) *ռէ տէ Ֆրանցն պաշարեաց զԴունիզ եւ անդ մեռաւ*»[9]:

Ըստ լրագրային մի յօդուածի՝ ԺԷ. դարում հայեր են բնակուել Լիբիայում, որոնք 1665ին այնտեղ իրենց դրամով մի մատուռ են կառուցել: Գաղութը եղել է մեծ եւ ինքնաբաւ, սակայն յետագայում ցրուել է[10]: Այս տեղեկութեան բուն աղբիւրը մեզ չյաջողուեց ճշտել: Լիբիան յիշուած է 1624ին գրչագրուած մի Աստուածաշունչ մատեանի յիշատակարանում՝ կապուած ժամանակի պատմական իրադարձութիւնների հետ. «*Զի զկողմն արեւմտեան զկլիմն եւ զգերմասն Ասիական տիրեալ է հանդերձ Լիբիայիւ, զնահանգն Եգիպտական...*»[11]: Նոյն ԺԷ. դարում ստեղծուած մի հայերէն ժամանակագրութեան մէջ, որ վերագրւում է Անանուն Լիվոռնոցուն, յիշւում է նաեւ Մարոկկօն. «1577 - *թագաւորք Փորթուկալին բազում անգամ, բազում զօրօք յարեան ի վերայ Արաբացւոց, որ մերձ է առ նոսա եւ կոչին Մարօքօ եւ Ֆէսա եւ բազում պատերազմ պատերազմեցան, բայց ոչ ինչ օգտեցան եւ անկան անդրէն երեք թագաւորք եւ զօրք բազումք իւրեանց Երկիրն այն Ափրիկէ կոչի*»[12]:

Հայերի ներկայութեան յաջորդ փուլը վերաբերում է հիւսիսային Ափրիկէում օսմանեան տիրապետութեանը, երբ ԺԵ. դարում Օսմանեան Կայսրութիւնը զաւթել է այդ շրջանի երկրները: Հայաստանից այնքան հեռու գտնուող այս ժողովուրդները՝ լիբիացիները, ալժիրցիները եւ այլք, մի քանի դար շարունակ հայ ժողովրդի ստուար մի հատուածի հետ միասին ենթարկուել են միեւնոյն վարչակարգին: Օսմանեան շրջանում հիւսիսային Ափրիկէի երկրները՝ Տրիպոլին (Լիբիա), Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկօն յայտնի են եղել Թարապլուս, Թունուզ, Ջեզայիր եւ Մարոք անուններով: Ալժիրում հայութեան գոյութեան մի ապացոյցն է Ճէզայիրլեան ամիրաների տոհմը, որ ծագել է Ալժիրում եւ ապա գաղթել Կոստանդնուպոլիս[13]:

Տիգրանակերտցի Աւետիք Բաղդասարեանը 1682-1704ին եղել է Եթովպիայում, Նուբիայում, Սուդանում, ներկայիս Չադ հանրապետութեան տարածքում, ապա Սահարա անապատով հասել է Ափրիկէի հիւսիսային շրջանները, մինչեւ Ջիբրալթարի նեղուց[14]: Թունիսի մասին նա գրել է հետեւեալը. «*...Ճերմակ ծովեզերն Թունուզին օճախն է. Օսմանլիէն փաշա կու նստի, եւ է հնազանդ Օսմանլուին. Թունուզի ազգն արապ են. եւ ունին լայն եւ արձակ օլքա* (*իւլքէ, վիճակ*) *գեղօրայիւք. եւ ունին աւի* (*ապստամբ, անհանդարտ*) *արապ. թէ չկամին՝ չեն հնազանդիր: Եւ Թունուզն ծովուն վերայ ղալէօն ունի* (*մեծ նաւ*, galeon), *կու ծեծվի Ֆռանկին հետն*»[15]:

Ալժիրում հաստատուած հայ կաթոլիկների մասին արդէն 1855ին ֆրանսիացի հեղինակ Վ. Ա. Բարբի Դիւ Բոկաժը գրել է 48 էջանոց գրքոյկ[16]:

1885ին Թունիսում բնակուել են 7 տուն հայ եւ 20 պանդուխտ՝ վաճառականներ եւ արհեստաւորներ: Մեծ մասը եղել է Սեբաստիայից, մնացեալը՝ Պոլսից, Իզմիրից, Ռոդոսթոյից, Կարինից եւ Վանից: Նախապէս նրանց կրօնական կարիքները հոգացել է տեղի յունական եկեղեցին, այնուհետեւ 1901ին

Պոլսի պատրիարքարանը նրանց է ուղարկել մի հայ քահանայ, կազմուել է նաեւ առանձին հոգաբարձութիւն[17]: Իսկ Լիբիայի հայկական համայնքները հիմնադրուել են 1888ին, Տրիպոլիում եւ Բենգազիում (որն օսմանեան կառավարութեան աքսորավայրերից էր), երբ Օսմանեան Կայսրութիւնը այդ շրջաններ է աքսորել հայերի, որոնք իրենց հետ տարել են իրենց ընտանիքները: Այդ դատապարտեալներից են եղել Սարեան, Ճիպանկուլեան, Մուրատ եւ այլ ազգանուններ կրող հայեր[18]:

ԺԹ. դարի վերջին-Ի. դարի սկզբին դիպուածով հիւսիսային Ափրիկէի երկրներում որոշ գործունէութիւն են ծաւալել մի քանի հայորդիներ: Լիբանանեան տպագրութեան հիմնադիր Ջորջ Մկրրը (Մկրեան), որը գործել է նաեւ Ֆրանսիայում եւ Հոլանդիայում, որոշ ժամանակ աշխատել է նաեւ Թունիսում, որտեղ իտալական քարոզչութեանը հակազդելու համար հրատարակել է արաբերէն թերթ[19]: Պոլսահայ երաժիշտ Գրիգոր Սինանեանը (1836-1914) գրել է Թունիսի քայլերգը, որը յետագայում տարածում է գտել որպէս «Իզմիրի Քայլերգ»:

Առաջին արուեստագէտը, որ արաբերէնով թատերախաղեր է ներկայացրել արաբախօս Ափրիկէում, եղել է Սուլէյման Քըրտահի անունով մի քրիստոնեայ: 1968ին նրա մասին յօդուած է գրել սիրիացի մտաւորական Սալման Քաքայան: Ըստ նրա՝ Սուլէյման Քըրտահին նախ գործել է Եգիպտոսում, ապա անցել է հարեւան երկրներ: Թունիսում ֆրանսիացիների հիմնադրած թատրոնում ներկայացուել են միայն ֆրանսիական թատերախաղեր եւ իտալական օպերաներ: Քըրտահին 1907ին ժամանել է Թունիս եւ սկսել արաբալեզու ներկայացումներ բեմադրել նախ երկրի երկրորդական քաղաքներում, ապա՝ մայրաքաղաքում, ինչպէս նաեւ Ալժիրում: Յատկապէս մեծ յաջողութիւն է ունեցել նրա «Սալահ Էդդին Էյուբի» ներկայացումը: Մարոկկոյի թագաւոր Բայը նրան արժանացրել է ոսկէ մեդալի: Քըրտահին մահացել է 1909ին: Միայն մահից յետոյ է յայտնի դարձել նրա քրիստոնեայ լինելը (քանի որ նրան բոլորը Շէյխ Սուլէյման են անուանել), ուստիեւ թաղուել է քրիստոնէական գերեզմանատանը: Թունիսում շատերն են կարծել, որ նա հայ է: Վերոյիշեալ դոկտոր Քաքայան այդ կարծիքին չի եղել, սակայն յիշել է, որ Քըրտահիին հայ է համարել նաեւ Թունիսի Դերասանական Կաճառի Թատրոնի Պատմութեան դասախօս, թատերագէտ Մոհամմէդ Հաբիբը: Ենթադրում է, որ իսկական անունը եղել է Սողոմոն, թերեւս Քըրտահեան[20]:

Ի. դարի սկզբին հիւսիսային Ափրիկէի երկրներ է այցելել մէկ այլ հայ դերասան՝ Վահրամ Փափազեանը (1888-1968), որը Միլանի Գեղարուեստի Ակադեմիայում ուսանելու երկրորդ տարում, 1909ին, Էրմետէ Նովելլիի խմբի կազմում մասնակցել է հիւրախաղերի: Շեքսպիրեան վենետիկցի մաւրի անզուգական մեկնաբանը ստեղծագործական մեծ լիցք է ստացել Օթելլոյի հայրենիքում: Իր *Յետադարձ Հայեացք* յուշագրութեան մէջ նա գրել է հետեւեալը. «*Ուզում եմ մի քանի խօսքով ծանօթացնել մի այլ ժողովրդի հետ, որոնց մօտ այդ վեցամսեակին ապրեցի մի-երկու շաբաթ, այն է՝ մաւրերի հետ: ...Միանգամից ընկայ հազարաւոր օթելլօների մէջ: ...Սրանից աւելի լայն ուսումնասիրութեան դաշտ անհնարին էր գտնել: Եւ ես, ինչպէս ասում են, ո՛չ կերայ, ո՛չ խմեցի, այլ ամբողջ քսան օր, անընդհատ, գիշեր, թէ ցերեկ խառնուեցի նրանց: Մասնակցեցի նրանց նիստուկացին, կերուխումին, վշտերին եւ ուրախութիւններին: Ալժիր հասած օրս իսկ, ինձ տարեկից մի մաւրի՝ Իբն Հասանի հետ ծանօ-*

*թացայ.... Նրա հետ եղայ նրանց տներում, մօտից տեսայ նրանց կենցաղը, եղայ աղօթատեղերում, տեսայ եւ ուսումնասիրեցի նրա հօրը... Միշտ հորիզոններ դիտող աչքերով, արքայի քայլուածքով այդ մարդուն՝ շատ գծերով է պարտական իմ Օթելլօն։ Մալապատիկ նստեցի ժողովրդի հետ հասարակ սրճարաններում, համրիչը մատներիս ու ծխամորճը շրթներիս, առանց ծխող լինելու... Եւ երբ հեռացանք այդ երկրից, թէեւ Օթելլօն դեռեւս չէր ծնուել իմ մէջ, ճիշտ է, բայց նրա էութիւնը, նրա բնոյթը, մաւրը, այդ երջանիկ ափերից՝ ես տարայ իմ հոգու մէջ»*[21]:

1913ին Ռաբաթից Կ.Պոլիս ուղարկուած մի մասնաւոր նամակում նշուել է, որ արեւելքցիներից (հաւանաբար նկատի ունի Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներից) այնտեղ կան մօտ 20 յոյն, 3-4 սիրիացի եւ երեք հայ: Վերջիններս բնակուել են Կասաբլանկայում: Ֆրանսիացիները Մարոկկոյում մեծ ճակատամարտ են մղել Զայիան ցեղի դէմ, Մինէայի մօտ: Զօրագնդի մէջ եղել է նաեւ մի աղանացի հայ, որը փրկուել է Կիլիկիայի կոտորածից եւ Ֆրանսիայում զինուորագրուել է օտար լեգէոնում: Զօրավարը նրան հրամայել է պաշտպանել միակ աղբիւրը, իսկ մարոկկօցիները ցանկացել են ամէն կերպ խլել այդ աղբիւրը, ուստիեւ անխնայ գնդակոծել են հայ զինուորին: Վերջինս իր կեանքի գնով պաշտպանել է աղբիւրը եւ զոհուել՝ եօթ գնդակից զարկուած: Ֆրանսիացիները պատուով յուղարկաւորել են նրան, իսկ զօրավար Դալբիէն յայտարարել է, որ եթէ մարոկկօցիները պարտուել են այդ օրը, եղել է հայ զինուորի քաջութեան շնորհիւ[22]:

Թուրքիայից աքսորուած ամասիացի Խաչիկ Յովհաննէս Պուլտուգեանը (ծն. 1906) եւ աղանացի Յարութիւն Մալեանը (ծն. 1904) Առաջին Աշխարհամարտից յետոյ յայտնուել են Մարոկկոյի Սեֆրու քաղաքում: 1920ի Մայիսի 18ին նամակով դիմել են Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեանը՝ խնդրելով իրենց անձնագրեր տալ: Մայիսի 25ին նոյն պատուիրակութեանը գրած նամակով նրանք տեղեկացրել են, որ Սեֆրուի «զինուորական յարկում» գտնուում են վեց հայեր, որոնք կամ որբ են, կամ անչափահաս՝ զինուորութեան համար: Դիմել են՝ նրանց եւս անձնագիր տալու եւ հայրենիք վերադառնալու խնդրանքով[23]: Պօղոս Նուպար փաշային են դիմել նաեւ Այժիրում ապաստանած Ոսկան Միքայէլեանը (Կոնստանտինայից) եւ Թորոս Դիլանեանը (ծն. 1900) Սիդի-Բէլ-Աբբէսից[24]:

Մարոկկոյում 1907ին Ատլանտեան Ովկիանոսի ափին հիմնուած Կասաբլանկա քաղաքում արդէն 1910ականներից բաւական հայեր են բնակուել, բոլորն էլ բարեկեցիկ կեանքով ապրող: Հայ շինարարներ մասնակցել են քաղաքի մի քանի շէնքերի կառուցմանը: Զբաղուել են սուրճի եւ նպարեղէնի առեւտրով: Գրիգորիսեան եւ Չաքրեան ազգանունով հայերը ունեցել են գրավաճառանոցներ: Իսկ ֆրանսիացիների բարեկարգած Մազագան քաղաքում 1922ին բնակուել է սամսունցի մի գաղթական՝ Տօնիկեան ազգանունով[25]:

1920ականներին պոլսահայ գործիչները հարց են բարձրացրել հայ գաղթականների մի մասին բնակեցնել Մարոկկօ՝ պատճառաբանելով այնտեղ տիրող կլիմայական ազատութիւնը[26]:

1922ի Հոկտեմբերի 18ին Թունիսի Ֆերիվիլ քաղաքից Իզմիրի Ռամկավար Ազատական Կուսակցութեան ակումբի երբեմնի ատենապետ Նշան Վարդանեանը հայ ազգային գործիչ Գաբրիէլ Նորատունկեանին գրած նամակում վկայել է, որ Իզմիրի հրկիզումից յետոյ շոգենաւով Մարոկկօ են ժա-

մանել մօտ 200 հայեր, որոնք իրենց քաղաքը լքել են Սեպտեմբերի 20ին: Նրանց տարաբաշխել են երեք զինուորական կայանների մէջ, որոնցից երկուսում կեանքը տանելի է եղել, մէկում՝ գրեթէ զինուորական[27]: Մարոկկոյում ապաստանած այս հայերից Արմենակ Գարանֆիլեանը 1922ի Հոկտեմբերի 28ին գրած նամակում վկայել է, որ Սիդի-Աբդալլահ բնակավայրում մնացել են 189 հայեր. նամակում գրել է անունները[28]: Այս հայերի մեծ մասը նաւով մեկնել է Մարսէյ, եւ բարեբախտաբար ոչ ոք թշուառ վիճակում չի եղել:

1934ին Մարոկկոյից Փարիզի *Ապագայ*ին ուղարկուած թղթակցութեան մէջ նշուել է, որ Կասաբլանկա քաղաքում բնակւում է շուրջ 50 հայ, ընտանիքները քիչ են եւ հայերի մեծ մասն ամուսնացած է օտարուհիների հետ: Ընդհանրապէս իզմիթցի են, քեմախցի, պոլսեցի, մարզուանցի եւ սամսունցի: Հայ ընտանիքների զաւակները ստիպուած յաճախում են օտար վարժարաններ, միայն մի ընտանիք կարողացել է զաւակին ուսման ուղարկել Սեւրի Մխիթարեան վարժարան: Հայերը սեփական գործի տէր են, մեծ մասամբ՝ սուրճի եւ հին հագուստեղէնի վաճառականներ: Կայ մէկ բժիշկ, մէկ ատամնաբոյժ եւ ամենատարբեր զբաղմունքների տէր անձինք (մանուֆակտուրայի խանութի տէր, գարաժիստ, սափրիչ, մածնագործ, յանձնակատար): Ոչ մի բանուոր չկայ: Չաքրեան ազգանունով մի հայ գրախանութ ունի քաղաքի ամենաբանուկ փողոցում: Գործում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղը, որ կազմուել է Էսմերեանի այցելութիւնից յետոյ: Տեղացիները շատ համակրում են հայերին եւ բարեկամական յարաբերութիւնների մէջ են նրանց հետ[29]:

Արդէն երկու անգամ յիշուած գրավաճառ Աւետիս Չաքրեանը եղել է ազգային բարերար, Մարոկկոյի շրջանի ազգային երեսփոխան եւ հայ համայնքի վարչութեան ատենապետ: Նա վախճանուել է 1941ին, Կասաբլանկայում՝ իր հարստութեան մեծ մասը կտակելով Բէյրութի Հայ Ճեմարանին[30]:

Առաջին Համաշխարհային Պատերազմի հետեւանքով օսմանեան հայ գաղթականների խմբեր հիւսիսային Ափրիկէի երկրներ են հասել ծովային ճանապարհով: Մարսէյի *Արմենիա* թերթը վկայել է, որ Ալժիրում յայտնուած հայերին տեղական իշխանութիւնները նեղութիւններ են պատճառել՝ որպէս թրքահպատակների: Սակայն յետագայում ալժիրեան կառավարութիւնը հայերի մասին աւելի մանրամասն եւ ստոյգ տեղեկութիւններ ստացած լինելով՝ սկսել է համակրութեամբ նայել հայերին եւ դիւրութիւններ տալ տարբեր գործերում: Այդ թերթին ուղարկած թղթակցութեան մէջ Ֆիլիպվիլի բնակիչներ Միքայէլեան եղբայրները տեղեկացրել են, որ ֆրանսիացիները համակրում են տեղացի հայերին եւ նոյնպէս փափագում են Հայաստանի ազատագրումը[31]: Նոյն պարբերականին 1918ին ուղարկուած մէկ այլ թղթակցութիւն տեղեկացրել է, որ Օրանի եւ շրջակայքի հայերը կատարել են իրենց հայրենակցի՝ Սիդի-Բէլ-Աբբէսի բնակիչ կեսարացի Յարութիւն Թորոսեանի յուղարկաւորութիւնը ֆրանսիացի քահանայով[32]:

1929ին հայ մամուլը տեղեկացրել է, որ Ալժիրի Բլիդա քաղաքում բնակւում են 15 հայ ընտանիք եւ երիտասարդ՝ ընդհանուր 45-50 հոգի: Քսանի մօտ երկսեռ մանուկներ յաճախում են ֆրանսիական վարժարաններ: Ազգային կազմակերպութիւններ չկան, ոչ իսկ յոյս, որ կը լինեն այդպիսիք: Թորոսեան անունով մի հայի պատկանել է նպարեղէնի մի մեծ խանութ: Մի հայ տնօրինել է մետաքսեղէնի գործարան, երկուսը՝ հագուստի խանութ: Երեք հայ

զբաղում են ոսկերչութեամբ, երկուսը՝ կօշկակարութեամբ, չորսը՝ շրջուն լուսանկարչութեամբ, մի քանիսը՝ շրջուն մանրավաճառութեամբ[33]: Որոշ ժամանակ Ալժիրում գործել է Հայ Օգնութեան Կոմիտէի մասնաճիւղը[34]:

1931ին ալժիրահայութեան թիւն ունեցել է հետեւեալ պատկերը.- Ալժէ՝ 20, Բլիդա՝ 80, Պորճպու Առեռիճ՝ 15, Սեքիֆ՝ 25, Սենք Առնօ՝ 3, Գուրապս՝ 3, Կոնստանտինա՝ 15, Ֆիլիպվիլ՝ 2, Պոն՝ 8, Սուդարաս՝ 5: Հայերը բնակուել են ծովափնեայ քաղաքներում: Համայնքի անդամները եղել են առեւտրականներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում: Եկեղեցի եւ դպրոց չեն ունեցել. մանուկներին մկրտել են ֆրանսիական եկեղեցում, երեխաները յաճախել են ֆրանսիական դպրոց: Շատ հայեր ընդունել են ֆրանսիական քաղաքացիութիւն[35]:

Ալժիրում ծնուած հայերից կարող ենք յիշել ֆրանսիացի կինօդերասան Իւ Վենսանին, ծնուած 1921ին, Ալժէում (հայրը՝ դամասկոսցի հայորդի Ալֆրէդ Վենսանը ֆրանսուհի կնոջ հետ Ալժիր էր տեղափոխուել՝ խուսափելով Ֆրանսիայում տիրող ազգայնական տրամադրութիւններից[36]), ինչպէս նաեւ Ալժիր քաղաքում 1923ին ծնուած պատմաբան, Պորտուգալիայի եւ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ Ռոբերտօ Կիւլպենկեանին:

Նոյն 1931ին Բլիդայից հայ մամուլին ուղարկուած «Անշէն Որբուկ» ստորագրութեամբ մէկ այլ թղթակցութեամբ հաղորդուել է թէ[37] Ալժէում բնակւում են մի քանի ընտանիք եւ մի քանի երիտասարդ, որոնք զբաղւում են սուրճի վաճառքով եւ այլ առեւտրական գործերով: Կայ ներկայանալի մի ճաշարան: Ազգային կապն այնքան էլ սերտ չէ, բոլորը մտածում են միայն ապրուստ հայթայթելու մասին, մոռացած կամ մոռացումի տուած ամէն ինչ: Ալժէից 60 կիլոմետր հեռու գտնուող Բլիդայում ամենամեծ հայկական համայնքն է: Կան 15 ընտանիք եւ նոյնքան էլ ամուրի երիտասարդ: Քաղաքի հնագոյն հայ բնակիչը Գ. Թորոսեանն է, որ հասել է որոշակի դիրքի եւ վայելում է օտարազգիների յարգանքը: Բլիդայի միւս յայտնի հայորդին Ղ. Ալակոզեանն է, որն ութ տարի է տնօրինում է մի հիւսուածեղէնի գործարան: Քաղաքում կան նաեւ հայ ոսկերիչներ, հանդերձեղէն վաճառողներ եւ կօշկակարներ: Հայ ամուրիների մի մասը զբաղուել է լուսանկարչութեամբ՝ շրջելով զանազան վայրեր: Անգամ այդ փոքրիկ կղզիացած հայագաղութում բոյն է դրել ազգային անհամերաշխութիւնը, ինչի մասին էլ ցաւով արձանագրում է Անշէն Որբուկը:

1935ին Մարոկկօ, Ալժիր, Լիբիա եւ Թունիս է այցելել Մարսէյի Ազգային Վարչութեան հոգեւոր հովիւ Եղիշէ քահանայ Մխիթարեանը՝ հանգանակութեան համար: Նա իր տպաւորութիւն-զեկոյցն ամփոփել է Փարիզի *Յառաջ* օրաթերթում[38]: Ըստ Մխիթարեանի՝ Ալժիրի հայութեան կենտրոնը եղել է Ալժէ Բլիդա քաղաքը, որտեղ բնակուել են 37 ընտանիք, ունեցել երեք թաղային խորհուրդ: Բուն Ալժէում ապրել է 14 հայ ընտանիք՝ երկու ապահովագրական պաշտօնեայ, երկու դերձակ, չորս լուսանկարիչ, մէկ առեւտրական, մէկ պաշտօնեայ, երկու աղիքի գործարանի տէր: Նրանցից հանգանակուել է 490 ֆրանկ: Բլիդայում բնակուել է 23 հայ ընտանիք՝ մի քանի առեւտրական, 5 ոսկերիչ, 2 ճաշարանատէր, մէկ սափրիչ, երեք հին հագուստի վաճառական: Ազգային կեանքի եռանդուն գործիչ Քերովբէ Թորոսեանն ունեցել է առեւտրական մեծ տուն: Հայերն ունեցել են վարչական միութիւն: Հանգանակել են 1330 ֆրանկ: Պորճու Առեռիջ քաղաքում բնակուել է ութ հայ ընտանիք, սեփական գործի տէրեր, վեց առեւտրական տուն, երկու հին հագուստի վաճառական եւ մէկ փաստաբան: Վարչական մարմին է ընտ-

ռուել, կենտրոնը՝ Պորճ-Սեթիֆում: Հանգանակել են 1860 ֆրանկ: Կոնստանտինա քաղաքի հայերից հանգանակուել է 730, Ֆիլիպվիլից՝ 1825, Բոնից՝ 200, Սուք Ահրասից՝ 530 ֆրանկ: Հայերը ցրուած ապրել են նաեւ Սիդի-Բէլ-Աբբէս, Օրեանվիլ, Աֆրովիլ, Սեթիֆ եւ Սան Առնօ բնակավայրերում[39]:

Թունիսում 1936ին բնակուել է 17 ընտանիք, շատերը՝ սեփական գործի տէր: Ընտրել են վարչական մարմին եւ հանգանակութիւն կատարել: Թունիսի հայերը նոյնպէս կապուած են եղել Ֆրանսիայի թեմին: Ցանկացել են մշտական քահանայ ունենալ, այդ հարցով դիմել Մարսէյի Ազգային Կենտրոնական Վարչութեանը[40]:

Ինչ վերաբերում է Մարոկկոյին, ապա այս երկրի հայերի մասին Եղիշէ քահանան յայտնել է թէ Կասաբլանկայում բնակւում է 23 հայ ընտանիք՝ առեւտրականներ եւ տարբեր զբաղմունքների տէր անձինք (երկու սափրիչ, երկու բժիշկ, մէկ ատամնաբոյժ, մէկ մեքենագէտ): Գործում է մէկ եւրոպական տիպի գորգավաճառատուն: Սեպտեմբերի 24ին գումարել են ընդհանուր ժողով, որի ընթացքում մարոկկահայերը հանգանակել են 2020 ֆրանկ: Ռաբաթում բնակուել է 9 հայ տուն՝ վաճառականներ, խանութպաններ եւ արհեստաւորներ, որոնցից հանգանակուել է 1050 ֆրանկ: Մազագան քաղաքում բնակուել է չորս ընտանիք եւ մէկ ամուրի: Նրանցից էդիրնէցի Յ. Սարկաւագեանն ունեցել է երկաթի եւ աղիւսի մի մեծ գործարան: Այս քաղաքի հայերը հանգանակութեանը մասնակցել են 300 ֆրանկով: Սաֆիում ապրել է երկու կեսարացի ընտանիք, որոնք նուիրել են 300 ֆրանկ, իսկ Մոքադուրում բնակուող մէկ հայ ընտանիքը՝ 100 ֆրանկ: Մարակէշի հայ ընտանիքների թիւը եղել է չորս, երկուսը՝ դարաբաղցի, մէկը՝ իզմիրցի եւ միւսը՝ բաբերդցի: Նրանք Եղիշէ քահանային նուիրել են 170 ֆրանկ: Երկու հայ ընտանիք է ապրել Ֆէսում, որոնցից ձեռք է բերուել 300 ֆրանկ, մէկ ընտանիք եւ երկու ամուրի՝ Մեքնէսում, որոնք էլ նուիրաբերել են 650 ֆրանկ: Այդպիսով, Մարոկկոյի հայերից ֆրանսահայ հոգեւորականը ժողովել է ընդհանուր 4890 ֆրանկ: Նա կազմել է մարոկկահայ համայնք, որի կենտրոնը դարձել է Կասաբլանկան: Նրանք ընտրել են իրենց պատգամաւորին Մարսէյից, որը պէտք է կապ պահպանէր Ազգային Վարչութեան հետ[41]:

Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հիւսիսային Ափրիկէում տեղակայուած տարբեր երկրների զօրքերի կազմում եղել են մի շարք հայորդիներ: Այսպէս, Բուենոս Այրէսում հաստատուած ծնունդով զէյթունցի Գէորգ Սեթեանը 1941ին անգլիական բանակի կազմում մասնակցել է ռազմական գործողութիւնների Լիբիայում:

Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հիւսիսային Ափրիկէի հայ բնակիչների վերաբերեալ տեղեկութիւններ չկան, դրանք ի յայտ են եկել 1940ականների վերջին, որից կարելի է եզրակացնել, որ թուային պատկերը գրեթէ մնացել է նոյնը: Այսպէս, 1949ին Թունիս քաղաքում հաշուուել է 15 հայ ընտանիք, ընդ որում՝ երկու բժիշկ, երկու ատամնաբոյժ, մի քանի պաշտօնեայ, մնացածը զբաղուել են առեւտրով: Մի քանի հայ ընտանիքներ էլ բնակուել են Թունիսի ներքին գաւառներում: Թունիսահայերն ապրել են համերաշխ, սերտ ընտանեկան յարաբերութիւններով եւ վառ ազգային զգացումներով[42]: Նոյն 1949ի Յունուարին Կասաբլանկա է այցելել հայր Մեսրոպ Աւետիսեանը: Նա տեղի յունական եկեղեցում պատարագ է մատուցել, որից

յետոյ նրա նախագահութեամբ կայացել է գաղութահայ ժողով: Ընտրուել է նոր վարչութիւն հետեւեալ կազմով՝ կոմսուհի Արաքսիա Պատրիմոնիօ (պատուաւոր նախագահ), Ժան Միրան, Թ. Արթինեան, Պ. Վարժապետեան, Մ. Շաքարեան, Ե. Գարապելիքեան եւ Ա. Սիրմէեան (անդամներ), Տիկ. Պալթայեան եւ Մելիքով (խորհրդակցական ձայնով): Համայնքը 15 տարի հայ քահանայ չի տեսել, 12 մկրտութիւն է կատարել[43]: Ի դէպ, կոմսուհի Պատրիմոնիօն (ծն. Էսմերեան) եղել է Մարոկկոյում Ֆրանսիական Կարմիր Խաչի նախագահը:

1951ին սոցիալիստական հռչակուած Հարաւսլաւիայից Մարոկկո է տեղափոխուել ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերեանը (1896-1960)՝ կնոջ եւ որդիների հետ: Նրանք հաստատուել եւ մինչեւ 1957ը բնակուել են Կասաբլանկայում: 1952ի մի օր, տեղի փոքրաթիւ համայնքը պատիւ է ունեցել ճանաչել Թեհլերեանին: Հեռու մնալով հերոսի հովերից, սակայն տեղի տալով Կասաբլանկայի հայութեան թախանձանքներին՝ Թեհլերեանն ընդամէնը մէկ անգամ է հրապարակայնօրէն պատմել Թալէաթ փաշայի սպանութեան եւ Բեռլինում իր դատավարութեան մասին[44]:

Ի դէպ, նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի այրին՝ Արաքսի Վարուժանը (1892-1967), երկրորդ անգամ ամուսնացել է Ժիրայր Աբիկեանի հետ եւ տասնամեակներ շարունակ բնակուել Կասաբլանկայում[45]: Տիկին Արաքսիի մահից յետոյ Վարուժանի արխիւի եւ գրադարանի մի մասը ձեռք բերելու նպատակով Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի ֆոնդապահ Գոհար Ազնաւուրեանը 1969ին մեկնել է Մարոկկո եւ ձեռք բերել վարուժանեան թանկագին մասունքներ:

Կասաբլանկայի հայ համայնքի ակտիւ գործիչներից է եղել ծնունդով երզնկացի Գրիգոր Յարութիւնեանը, որը 1914ին հաստատուել է Ալժիրում, ապա՝ Մարոկկոյում: Նա զբաղուել է հայ գաղթականների խնդիրներով, կրթական եւ կրօնական հարցերով: 1969ին նամակ է գրել Երեւան՝ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին, ցանկութիւն յայտնել հայրենադարձուել[46]:

1933-1969ին Կասաբլանկայում է բնակուել պոլսեցի արուեստագէտ Վահան Մարգարեանը: Նա կերտել է թանկարժէք քարերից եւ ջնարակից աշխատանքներ, հիմնականում՝ աստուածաշնչեան մոտիւներով («Քրիստոսի Կեանքը», «Դրախտ»): Ցուցահանդէսներ է ունեցել 1962-1964ին: Մարգարեանը 1969ին վերադարձել է Ստամբուլ[47]:

Ֆրանսահայ իրաւաբան եւ գրող Վահան Համբարձումեանը 1939ին մեկնել է Ալժիր՝ պաշտպանելու իր մի հայրենակցի շահերը: Պատերազմի պատճառով նա մնացել է Ալժիրում, որտեղ ամուսնացել է ֆրանսուհու հետ, ունեցել մի դուստր՝ Միրէյ Համբարձումեան: Խաղաղութեան հաստատումից յետոյ նա մեկնել է Մարոկկո՝ Կասաբլանկա, որտեղ ստեղծել է իր իրաւաբանական կենտրոնը: Այստեղ էլ Համբարձումեանը վախճանուել է 1964ին: Թաղուած է Կասաբլանկայի ԷլՀանք գերեզմանատանը[48]:

1956ին *Արմենիայ*ի թղթակիցը տեղեկացրել է թէ Մարոկկոյի հայ գաղութը, հիմնադրուած 1920ին, 1956ին ունեցել է շուրջ 80 հայ ընտանիք, մօտ 400 անձ՝ առեւտրականներ եւ արհեստաւորներ, որոնք ջերմ յարաբերութիւններ ունեն տեղացիների հետ: Ռաբաթում ապրել է 15 հայ ընտանիք: Նոյն 1956ին Կասաբլանկայում գումարուել է մարոկկահայերի տարեկան ընդհանուր ժո-

ղովը: Հայեր կան Մազագան քաղաքում (7 ընտանիք), Մարակէշ՝ 6, Մեքնէս՝ 6, Սաֆի՝ 4, Ֆէս՝ 4 եւ Մոկատար՝ 2 ընտանիք: Նոյն թղթակիցը նաեւ նշել է, որ հայերն Ալժիրում եւ Թունիսում հաստատուել են 1920ից յետոյ. 1956ին Ալժիրում ապրել է շուրջ 120 հայ ընտանիք (մօտ 500 հոգի): Բոլորը եղել են բարեկեցիկ վիճակում. մեծ մասամբ առեւտրականներ: Ալժէ մայրաքաղաքում ապրել է 20 ընտանիք, Բլիդայում 25 (5ը՝ ոսկերիչ), Պորճպու Առեռիջում՝ 10 (բոլորն առեւտրականներ), Կոնստանտինում՝ 8, Ֆիլիպվիլում՝ 5, Սուգաիրասում՝ 8, Աֆրովիլում՝ 5, Սիդի-Բէլ-Աբէսում՝ 4 եւ Օրլեանվիլում՝ 5: Ողջ Թունիսում բնակուել է 25 ընտանիք՝ շուրջ 80 հոգի[49]:

1959ի տուեալով Կասաբլանկայի հայերի թիւը եղել է մօտ հարիւր, մեծ մասամբ առեւտրականներ, որոնց թւում յիշւում են Ազատ Սուրմէնեանը (Կասաբլանկայում հաստատուած առաջին հայերից), Հայկազ Ասատուրեանը, Պերճ Վարժապետեանը, Ցաւակ Արթինեանը, Ժիրայր Սուրմէնեանը, Վ. Թորոսեանը եւ այլք: Ընտանիքով այստեղ է հաստատուել նաեւ նկարչուհի Վաւա Սարգիս Խաչատուրեանի եղբայրը՝ Կարօն: Քանի որ Մարոկկոյում գոյութիւն չի ունեցել հպատակութեան մասին օրէնք, հայերը մարոկկոցի չեն համարուել[50]:

1950ին Ալժիրի բոնցքամարտի ախոյեան է հռչակուել Էդուարդ Աճեմեանը, որն առաջնութիւն է շահել Ալժիրի արեւմտեան շրջանի մրցումներում՝ մարզիկներ Դամիայի եւ Թահարայի դէմ տարած յաղթանակներով: Կէս միլիոնից աւելի արաբներ հետեւել են այդ մենամարտին[51]: 1951ին Կասաբլանկայում հայ հօր եւ ֆրանսուհի մօր ընտանիքում է ծնուել ներկայումս Ֆրանսիայում ճանաչուած քաղաքական գործիչ Ռոժէ Կարուչին, որը վճռականօրէն դէմ է հանդէս գալիս Եւրոպայի Խորհրդին Թուրքիայի անդամակցութեանը: 1982ին Ալժիրի Բաբ էլ Ուէդ բնակավայրում ալժիրցի հօր եւ հայ մօր ընտանիքում է ծնուել այսօր Ֆրանսիայում ճանաչուած հիփ-հոփ եւ սթրիթդանս պարերի յայտնի կատարող Սոֆիա Բուտելլան[52]:

Տարբեր երկրների հայ մտաւորականներ եւ արուեստագէտներ զանազան առիթներով ապրել եւ աշխատել են հիւսիսային Ափրիկէի երկրներում՝ որոշակի հետք թողնելով այնտեղ: Երկու ֆրանսահայ դերասաններ՝ Հիւգ դը Բագրատիդը (Սվաճեան) եւ Մաքս Մաքսուտեանը, 1920ականներին Հիւսիսային Ափրիկէում նկարահանուել են ֆրանսիական արտադրութեան ֆիլմերում եւ երկուսի հետ էլ արտառոց դէպքեր են կատարուել[53]: Հաւանաբար 1930ին Ալժիրում եւ Թունիսում համերգերով հանդէս է եկել քամանչահար Ռուբէն Գարախանեանը (1892-1983)[54]: 1930ին ֆրանսաբնակ քարտէզագիր Զատիկ Խանզատեանը Ֆրանսիայի կառավարութեան յանձնարարութեամբ եւ ֆրանսիական զօրքերի կողմից Ալժիրի գրաւման հարիւրամեակի հանդիսութիւնների առթիւ կազմել է Ալժիրի շքեղ ատլասը: Հատորը պարունակում է Ալժիրի աշխարհագրութեանը, ազգագրութեանը եւ պատմութեանը վերաբերող էական տեղեկութիւններ, Ալժիրի բոլոր քարտէզների հաւաքածուն (հնագոյններից մինչեւ նորագոյնները): Ատլասը գեղազարդուած է արաբական ոճի զարդանկարներով, որ պատկերել են Խանզատեանին գործակցող հայ գծագրիչները: Ֆրանսիական Ակադեմիան այդ հատորն արժանացրել է մրցանակի[55]:

1949ին Մարոկկոյում նկարահանուած «Մարակէշի Պարուհին» կինոնկարի գլխաւոր՝ բերբէր պարուհու դերը կինոբեմադրիչ Լէոն Մաշօն վստահել

է հայազգի գեղեցկատես պարուհի Սիրէն Աճեմովային (ծն. 1928, Փարիզ)[56]: Նոյն ֆիլմում հանդէս է եկել նաեւ հայազգի դերասան Իւ Վենսանը՝ արաբի դերով[57]: Ալժիրի եւ Թունիսի թատրոններում է աշխատել նաեւ ֆրանսիական թատերական բեմադրիչ հայազգի Էդմոն Թամիզը (Թահմիզճեան)[58]: Ֆրանսահայ երգչուհի-պարուհի Ամի Անահիտը մանկուց բնակուել է Ալժէում, որտեղ հետեւել է պարի դասերի, յետագայում այստեղ ամուսնացել երգահան Արման Կանկորայի հետ: 1950ականների վերջին Մարոկկոյում մեծ ժողովրդականութիւն են վայելել Սայեաթ-Նովայի երգերը՝ ֆրանսահայ երգչուհի Աիդա Ազնաւուրի (ծն. 1923) կատարմամբ, որոնք տարածուել են մեծ համեմատութեամբ[59]: Ֆրանսահայ գրող եւ պատմաբան Ժերար Շալեանը (ծն. 1934) որոշ ժամանակ ապրել է Ալժիրում, այստեղ խմբագրել է *Révolution Africaine* թերթը, հեղինակել է պատմագիտական, տնտեսագիտական աշխատութիւններ, որոնցից *Համայնավարական Խնդիրներն Ալժիրում* ֆրանսերէն ուսումնասիրութիւնը (1964) թարգմանուել է նաեւ արաբերէն:

Աշխատանքի բերումով հիւսիսային Ափրիկէի պետութիւններին առնչուել են նաեւ այլ երկրների հայ մտաւորականներ: Տակաւին Ի. դարի սկզբին Ալժիրում կառուցուել են շէնքեր ֆրանսաբնակ ճարտարապետ Լեւոն Նաֆիլեանի (1877-1937) նախագծերով: 1950ականներին մի քանի տարի Մարոկկոյի Տանժէ քաղաքում է աշխատել իտալաբնակ հայ ճարտարապետ Արմէն Զարեանը (1914-1994), որը յետագայում հայրենադարձուել է: Տանժէում մի քանի շէնք է կառուցուել նրա նախագծով: Այստեղ է ծնուել նրա դուստրը՝ ներկայումս կանադաբնակ բանաստեղծուհի Սիրվարդ Զարեանը: Մի քանի տարի Մարոկկոյի ազգային ռադիո-հեռատեսիլի թղթակից է եղել Լեւոն Քեշիշեանը (1917-1984), որը մարոկկահայութեան վերաբերեալ թղթակցութիւններով աշխատակցել է հայ մամուլին: Նա նաեւ նկարահանել է «Թունիսը ՄԱԿում» 20 ռոպէանոց արաբերէն եւ ֆրանսերէն ֆիլմը, որը ներկայացնում է Թունիսի գործունէութիւնը ՄԱԿում, նախագահ Պուրկիպայի այցելութիւնը եւ ֆրանսերէն ճառը ՄԱԿում, թունիսցի այլ ղեկավարների աշխատանքային գործունէութիւնը: Այս փաստագրութիւնը ՄԱԿի Գլխաւոր Քարտուղար Ու Տանի՝ Թունիս կատարած այցելութեան առթիւ ցուցադրուել է Թունիսի 24 կինոթատրոններում[60]:

Ալժիրում եւ Թունիսում շատ հայ մասնագէտներ են աշխատել նաեւ Խորհրդային Միութիւնից: 1968-1977ին Ալժիրում է աշխատել խորհրդահայ երկրաբան Սերգէյ Դանիլեանցը, որը եղել է երկրախուզական արշաւախմբի ղեկավար: Ալժիրի Բատնա քաղաքում 1970ին ծնուել է նրա դուստրը՝ մոսկուացի բանաստեղծուհի եւ շարժանկարչուհի Տատիանա Դանիլեանցը[61]: 1964-1967ին երեւանցի պարող Վարդգէս Ռաշիդեանը Մարոկկոյում կազմակերպել է ժողովրդական պարի խումբ: 1978ին Մարոկկոյի ԽՍՀՄ դեսպան է եղել Եւգենի Ներսէսովը (ծն. 1921, Մոսկուա): Լիբիայում որոշ ժամանակ ԽՍՀՄ դեսպան է եղել Պօղոս Ակոպովը (Յակոբեան, ծն. 1926):

1955ի տուեալով՝ հիւսիսային Ափրիկէի մէկ այլ երկրում՝ Լիբիայում, բնակուել է 70-80 հայ ընտանիք, տարբեր վայրերից գաղթած: Նրանք չեն ունեցել ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ոչ էլ որեւէ ազգային կեանք: Հայերի երեխաները յաճախել են օտար վարժարաններ[62]: 1964ին նախկին լիբիաբնակ, ծնունդով սեբաստացի Պօղոս Ալպահեանը Լոս Անջելըսի հայ մամուլին յայտնել է, որ Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում բնակում է 12 հայ ընտանիք՝ մօտա-

տրապէս 60 հոգի, որոնք զբաղւում են առեւտրով եւ արհեստներով: Կան հայ պաշտօնեաներ, որոնք աշխատում են նաւթային ընկերութիւնում, սակայն նրանք երկրի մնայուն բնակիչներ չեն: Ազգային կեանք գոյութիւն չունի, հայ ընտանիքների զաւակներն իտալերէն են խօսում, պատկանում են յունական եկեղեցուն[63]: 1967ին Լիբիայի Պարի Պետական Համոյթին համագործակցել է լիբանանահայ պարաղիր եւ պարուսոյց Սարգիս Բասքալեանը:

Լիբիահայերից Յակոբ Նշանի Օղաբաշեան Վիզիանօն (ծն. 1904ին, զբաղմունքով՝ լուսանկարիչ) 1969ին գաղթել է Հայաստան, կնոջ՝ իտալուհի Կարմելլա Պուտչինա Ջովանի Օղաբաշեան-Վիզիանոյի հետ (ծն. 1919, մասնագիտութեամբ՝ հաշուապահ): Նրանք բնակուել են նախ Աբովեանում, ապա՝ Երեւանի Նորքի 4րդ զանգուածում[64]:

Հիւսիսային Ափրիկէում բնակուող հայերից ոմանք ըստ երեւոյթին ձգտել են կապ պահպանել Հայաստանի եւ միւս գաղթավայրերի հետ: Ալժիրի բնակիչ Արշակ Գրիգորեանը բաժանորդագրուել է *Հայրենիքի Ձայն* եւ *Սովետական Գրականութիւն* պարբերականներին: 1971ի Մարտի 18ին այդ պարբերականների խմբագրութիւններին յղած նամակում յիշել է, որ Ալժիրում կայ 3-4 հայ տուն եւ հայկական ոչ մի ձեռնարկ:

1979ին Թունիսի մայրաքաղաքում արաբ բժիշկների համագումարին մասնակցող սիրիահայ բժիշկ եւ գրող Թորոս Թորանեանը վկայել է, որ քաղաքի հեռախօսագրքում փնտռել է հայկական ազգանուն եւ հանդիպել մի հայրենակցի, որը, պարզուել է, եղել է Թունիսի Համալսարանի դասախօս, իրանահայ, ծնուած Թաւրիզում[65]: Թորանեանը հանդիպել է նաեւ Կասաբլանկայի բնակիչ բժիշկ Թուրեանին: Նա խոստովանել է, որ ափրիկեան ափերում «*դրամ չահեցայ, բայց էութիւնս կորսնցուցի*»[66]: Այս խօսքերն ապացուցում են այն համատարած ուծացումը եւ օտարացումը, որին ենթարկուել են հիւսիսային Ափրիկէի փոքր հայագաղութները:

Ներկայումս Թունիսի Սուս բնակավայրում է ապրում ամերիկահայ բեմադրիչ, դերասան Էդուին Ջերարդը (Համամճեան), որը 2008ի տուեալով մտադիր է տեղական թատերական ուժերով բեմադրել հայ պարուհի Արմէն Օհանեանի (1887-1976) կեանքը եւ արուեստը պատկերող մի ներկայացում[67]:

Հայաստանի յարաբերութիւնները հիւսիսային Ափրիկէի երկրների հետ նոր փուլ են մտել 1991ին անկախութեան հռչակումից յետոյ: Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկօն Հայաստանի անկախութիւնը ճանաչած առաջին 50 երկրների մէջ են մտնում (համապատասխանաբար՝ 1991ի Դեկտեմբերի 26ին, 27ին եւ 31ին): 2005ին Ռուբէն Կարապետեանը նշանակուել է Մարոկկոյի Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Կահիրէ): Նա այցելել է Մարոկկո, հանդիպել արտաքին գործերի, մշակոյթի եւ արտաքին առեւտրի նախարարներին, հանդիպում է ունեցել նաեւ Մարոկկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ[68]: Այդ երկրներում հայերի թուի վերաբերեալ պաշտօնական տուեալներ չկան:

## ՀԱՅԵՐԸ «ՍԵՒ» ԱՓՐԻԿԷՈՒՄ

Ամստերդամում 1699ին լոյս տեսած Ղուկաս Վանանդեցու *Գանձ Ճափոյ, Կշռոյ, Թոյ եւ Դրամից Բոլոր Աշխարհի* գրքում յիշուած են նաեւ մի քանի ափրիկեան երկրներ (Կոնգօ, Անգոլա, Զանզիբար) եւ հակիրճ տուեալներ

դրանց բնական պաշարների, նաեւ բնակիչների վերաբերեալ. «*Կօնգ առատ ամէն սերմամբք, պտղովք եւ տնկօք, ունի թամար հինդի, շաքար ջօվգհնդի, պղինձ, երկաթ, արծաթ, լաւ մարմառ, յասպիս քար եւ այլ պատուական ջաւահիր. զանազան եւ զարմանալի գազանք։ Են կէսակէս Քրիստոնեայք։ Նոյնպէս եւ Անգօլա, որ եւ Դօնգ ասի։ Քաբրստանու* (կաֆրերի երկիր - Ա.Բ.) *մարդն է դժնեայ եւ մարդակեր, երկիրն գազանաբնակ։ Մօնօմօթապա կամ Բէնօմօթա է բարեխառն երկիր փոքր ինչ. առատ արօտիւ, ցորենով, բուսով, պտղով, եղեգնաշաքարով եւ այլ զանազան մրգօք. ունի պատուական մաղան ոսկւոյ, եւ այլ. իւրեանց լեզուաւ Աստուծոյ ասեն Ատունօ, հաւատով՝ շատն կռապաշտ է։ Մօնօյմուգ փոքր կղզի Քրիստոնեայ ունի Փորթուգէզի ազգէն. վայելուչ, պտղաբեր եւ շատամեղր, ոսկի, արծաթ, պղինձ եւ այլ զանազան թռչուն՝ եւ գազան, ընտանի եւ վայրի։ Ջանգէբար է առատ ոսկւով, եւ ֆլիկեռիք շատ, բնակօղք են Սէյլիտի, որ է Մահմեդական. կան եւ փոքր Քրիստոնեայք յ՝ազգէն Փորթուգալլիոյ, որք ունին բերդս եւ չէնս ոչ սակաւ*»[69]:

1730ականներին Լոնդոնի Թագաւորական Ափրիկեան Ընկերութիւնը փնտռել է մէկին, որը կը հեշտացնէր իրենց գործարքները Գամբիայի մահմեդական գերեվաճառների հետ: Նրանք վարձել են Մելքիոր Դէ Ջասպասին (Melchior de Jaspas), մի արաբախօս հայի (հաւանաբար՝ Մելքոն Գասպարեան): Նա մինչեւ մահ ծառայել է Լոնդոնի Թագաւորական Ափրիկեան Ընկերութեանն Ափրիկէում: Ըստ պատմաբան Ֆիլիպ Քըրթինի, Մելքիորի գործունէութիւնը, որպէս միջմշակութային միջնորդի Ափրիկէում, այնուամենայնիւ, աւելի լաւ կամ վատ չէր իր անգլիացի գործընկերների աշխատանքից[70]:

Հայերի խմբային ներկայութիւնը «սեւամորթ» Ափրիկէում վերաբերում է Ի. դարի առաջին քսանամեակին: Հատուկենտ հայեր յայտնուել են աւելի վաղ ժամանակներում: 1891ի տուեալով արեւելեան Ափրիկէի Լինդի քաղաքում բնակուել է մի հայ առեւտրական: Մարոկկոյում, ապա Մադագասկարում ֆրանսիական պետութեան պաշտօնեայ է եղել Մկրտիչ Անաշիկեանը, որ մահացել է 1893ին, Մադագասկարում: Ռուս-թուրքական պատերազմից յետոյ մի սամաթիացի հայ երիտասարդ ծառայել է անգլիական նաւերում, հասել Բարեյուսոյ Հրուանդանը, այնտեղ ամուսնացել իրլանդուհու հետ եւ հիւրանոց բացելով՝ դարձել է հարաւային Ափրիկէի առաջին հայ բնակիչը: 1896ին Քէյփքաւնում բնակուել է մի հայ արհեստաւոր, որը թղթակցել է Պոլսի *Արեւելք* օրաթերթին: 1904ին հարաւ-ափրիկահայերի թիւը տաս էր, որոնցից երկուսը բնակուել են Դելագոաբա քաղաքում, ութը՝ Եոհաննէսբուրգում: Դելագոաբայում բնակուող պոլսեցի Հ. Ազնաւուրեանը քաղաքից երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Քաթեմբէ վայրում հողատարածութիւն է վերցրել եւ Թրանսվաալում առաջինը սկսել բանջարեղէնի եւ պտղատու ծառերի մշակութիւնը: Հաւանաբար նա է կառուցել «Արմենիա» կոչուող ամբարտակը Վաալ գետի վրայ[71]: 1901ին կազմաւորուել է Դար-էս-Սալամի (Տանզանիա) հայկական փոքրիկ գաղութը, բաղկացած եգիպտահայերից եւ հնդկահայերից[72]:

ԺԹ. դարի վերջին կամ Ի. դարի սկզբին աշխարհի տարբեր երկրներում դեգերած պոլսեցի Երուանդ Յակոբեանը (յետագայում ամերիկաբնակ գործարար եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան բարերար անդամ) որը եղել է ականաւոր լեզուաբան Հրաչեայ Աճառեանի դասընկերը Պոլսի Սամաթիայի վարժարանում, 1915ին մի անգլիացու հետ մեկնել է Ափրի-

կէի անծանօթ տարածքներ, այցելել Խաղաղական Ովկիանոսի կղզիներ, հաւաքել վագրի մորթի, աղամանդ, փղոսկր, ուղարկել Եւրոպա վաճառելու: Յակոբեանը հանդիպել է արկածների, նաւակով այցելել է մարդակերների կղզի, ենթարկուել յարձակման, մի բարձր ծառ բարձրանալով՝ հրազէնով սպաննել եւ քշել է վայրենիներին: Հարաւ-Ափրիկէի Եոհաննէսբուրգ քաղաքում նա հանդիպել է «Մարտիրոս» մորթու գործարանի տիրոջը՝ բնիկ հայաստանցի Մարտիրոսին: Վերջինս ունեցել է կաֆրերից բաղկացած մի զօրագունդ, որոնք իր համար վայրի գազաններ են որսացել[73]:

Մէկ այլ պոլսեցի հայորդի՝ սկաուտական շարժման գործիչ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անդամ Լեւոն Սապունճեանը շրջագայել է հիւսիսային Ափրիկէում: Մաւրիտանիայում, իր 25 ընկերների հետ յարձակման է ենթարկուել մի կիսավայրենի ցեղախմբի կողմից: Խումբը երեք զոհ տալուց յետոյ լիակատար ոչնչացումից ազատուել է մի ֆրանսիական ջոկատի շնորհիւ: Յետագայում Սապունճեանը 1922ին հաստատուել է Փարիզում, որտեղ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով գրել է իր ուղեգրութիւնը[74]:

«Սեւ» Ափրիկէի երկրների փոքրաթիւ հայ համայնքներն սկսել են կազմաւորուել արդէն 1920ականներից: Յետագայ տասնամեակներին, հիմնականում Բ. Աշխարհամարտից յետոյ, մեծ մասամբ Մերձաւոր Արեւելքի երկրներից, նաեւ Յունաստանից եւ Ռումինիայից հարիւրաւոր հայեր, հիմնականում՝ արհեստաւորներ եւ առեւտրականներ, գաղթել են Նիգերիա, Քենիա[75] եւ Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն (ՀԱՀ): Նրանց մի զգալի մասը յետագայում տեղափոխուել է ԱՄՆ, Կանադա կամ եւրոպական երկրներ: 1940ականներին ՀԱՀում բնակուել է 10 հայ ընտանիք[76]:

1951ին Նիգերիայի Լագոս քաղաքում բնակուել է 12 հայ ընտանիք՝ առեւտրականներ եւ պաշտօնեաներ, բոլորը՝ կեսարացի, կիպրացի եւ կոնիացի: Քանօ քաղաքում բնակուել է նաեւ մէկ ատամնաբոյժ: Բոլորն էլ բարեկեցիկ վիճակում են եղել[77]:

Ափրիկէհայ համայնքներից միայն նիգերիահայ գաղթավայրի մասին գոյութիւն ունի առանձին մենագրութիւն, որ հեղինակել է Նիգերիայի բնակիչ Սուրէն Ա. Տատրեանը տակաւին 1958ին[78]: Գրքի երկրորդ մասն ամբողջովին նուիրուած է Նիգերիայի հայ համայնքին, իսկ վերջում տրուած է այդ երկրում բնակուած հայերի ցանկը (անուն-ազգանուն, ծննդավայր, Նիգերիա ժամանելու թուականը, զբաղմունքը): Այդ ցանկում կայ 34 հայի անուն՝ տիկնանց եւ ամուսինների անունների հետ մէկտեղ: Առաջին հայը Նիգերիայում հաստատուել է 1925ին՝ Մանչեսթրի Օղաբաշեան առեւտրական հաստատութեան հիմնադիր Արտաշէս Նազարէթ Օղաբաշեանը (1880ականներ, Կեսարիա - 1937, Լագոս), որը Արեւմտեան Ափրիկէում՝ Լագոսում եւ Աքրայում հիմնել է իր ընկերութեան մասնաճիւղերը, կերպասեղէնի ներմուծման Ardeno Limited & Otako Limited ընկերութիւնները, յետագայում իր մօտ բերել տասնեակի չափ հայեր: Օղաբաշեանի շնորհիւ Նիգերիայում եւ Կոտ դ'Իւուարում ստեղծուել է փոքրաթիւ հայ համայնք, որի անդամներից ոմանք առաջնակարգ դիրքի են հասել: Օղաբաշեանի բերած առաջին հայերից են եղել երիտասարդ գործունեայ Յակոբ Գարագաշեանը, որը դարձել է Օղաբաշեան Առեւտրական Հաստատութեան Նիգերիայի մասնաճիւղի ղեկավար (մահացել է 1937ին, Մանչեսթրում), նոյն ընկերութեան պաշտօնեաներ Մինաս-Գրիգոր Մելիքեանը եւ Նազարէթ-Եսայի Արրճեանը[79]: Վերջինս Լագոսում ունեցել է

կերպասեղէնի վաճառատուն, տնօրինել «Բրիսթոլ» հիւրանոցը, Մինաս Մելիքեանի հետ հիմնել է անշարժ գոյքի ընկերութիւն: Այդ ընկերութեան բաժնետէր, ինչպէս նաեւ Մելիքեանի եւ Արրճեանի վաճառատների Բենինի եւ Սաբլէի մասնաճիւղերի տնօրէն է եղել Հրանդ-Գրիգոր Մելիքեանը: Նա է եղել նաեւ Armels Transport Limited ընկերութեան հիմնադիր տնօրէնը եւ բաժնետէրը:

Նիգերիայի հայերի մեծ մասը եկել է 1930ականներին, եղել են ծնունդով Իզմիրից, Կեսարիայից, Մարզուանից, Ադանայից եւ Կիպրոսից: Տատրեանն իր գրքում յիշատակել է նաեւ հետեւեալ անունները՝ Ardeno Limited ընկերութեան պաշտօնեաներ Միհրան-Պետրոս Գալէնտէրեան, (1953ին տեղափոխուել է Հարաւային Ռոդեզիա), Մասիս-Լեւոն Գարագաշեան, United America ընկերութեան ձայնասփիւռի բաժնի ղեկավար Լեւոն Փափազեան (1949ին տեղափոխուել է Կահիրէ), Royal եւ Palm հիւրանոցների տէր Անդրանիկ-Սեդրակ Պասմաճեան, 1945-1947ին Otako Limited ընկերութեան տնօրէն եւ բաժնետէր Ռիչարդ Օղաբաշեան (1949ին տեղափոխուել է Քենիա), Լուսիա Գալէնտէր (1952ին տեղափոխուել է Աքրա՝ Գանա):

Նիգերիայի հայերը չեն ունեցել ազգային որեւէ կազմակերպութիւն: Այն հարցին, թէ ինչու գոնէ գերեզմանատուն չունեն, նիգերիահայ Հրանտ Մելիքեանը պատասխանել է. «*Որովհետեւ, հոս մեռնելու նպատակ չունենք*»[80]: Հայերն իրենց պսակը եւ մկրտութիւնը կատարել են օտար եկեղեցիներում, ակումբի պակասը լրացրել են բարեկամական հաւաքոյթներով: Բարգաւաճ այդ համայնքն ապրել է հաշտ եւ համերաշխ:

Ի դէպ, Տատրեանի գրքում ծանուցուել է թէ հեղինակը պատրաստում է հրատարակել «Կիկոյի Արկածներ (Նիկերիացիներու Կեանքէն)» վերտառութեամբ հատոր, սակայն նման գիրք մեզ առայժմ չի հանդիպել:

2009ի տուեալով՝ Լագոսում ապրում է շուրջ 60 հայ, գաղթած հիմնականում Լիբանանից, մի մասն էլ՝ Սիրիայից եւ Կիպրոսից: Հայերը հիմնականում ներգրաւուած են նաւթային ընկերութիւններում եւ առեւտրում: Հայերից ոմանք զաւակներին տանը սովորեցնում են հայերէն գրել եւ կարդալ[81]:

1955ին Քենիայում բնակուել է տաս տուն հայ ընտանիք, գործարարներ եւ պաշտօնեաներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում: Մայրաքաղաք Նայրոբիից 28 կիլոմետր հեռու գտնուող Թիքա բնակավայրի «Բլու Փոսթս» հիւրանոցը պատկանել է Երուանդ Սաաթճեանին: Նայրոբիում լուացքատան եւ քիմիական մաքրման կենտրոն է ունեցել Մովսէս Հենտոյեանը: Տրդատ Թըզըրեանը եղել է ինքնաշարժի ընկերութեան տնօրէն, իսկ տիկին Մերի Բէյցը (Տասնապետեան) կարեւոր պաշտօն է զբաղեցրել Գաղթականութեան Ազգային Բաժանմունքում[82]: Քենիայում 1950ականներին բնակուել է նաեւ վերոյիշեալ նիգերիահայ Արտաշէս Օղաբաշեանի դուստրը՝ Նենսի-Մերին ամուսնու՝ Արմենակի հետ[83]:

1960ականների վերջին Եոհաննէսբուրգում եւ շրջակայքում բնակուել է 100ից աւելի հայ՝ մեծ մասամբ պետական ծառայողներ, առեւտրականներ եւ գործարարներ: 1970ականներին նրանց թիւը համալրուել է Եթովպիայից գաղթած ընտանիքներով: 1970ին ստեղծուել է Հարաւային Ափրիկէի Հայկական Ընկերութիւնը՝ կիրակնօրեայ դպրոցով, հայկական պարերի եւ այլ խմբակներով: Գործել է ՀԲԸՄ մասնաճիւղը[84]: 1979ին հարաւ-ափրիկեան *South Africa Panorama* պարբերականում Լ. Քափսթիքդէյլի ստորագրութեամբ

լոյս է տեսել «Հայերը Հարաւային Ափրիկէում» յօդուածը, որը թարգմանաբար տպագրուել է հայ մամուլում: Հարաւ-ափրիկահայ Ն. Փամպուքեանը գաղութի անունից ասել է. «*Իւրաքանչիւր հայ ընտանիք սերտ կապեր հաստատած է ափրիկեաններուն եւ անգլիախօս հարաւ-ափրիկեցիներուն հետ: Մեր երիտասարդներէն շատեր միջամուսնութիւններ կնքած են եւ կազմած ընտանիքներ: Մենք կը սիրենք այս ընտանիքը եւ իր ժողովուրդը, եւ մեծ հաւատք ունինք իր ապագային հանդէպ*»[85]:

1990ի Ապրիլի 24ին հարաւ-ափրիկահայերը ցոյցի են դուրս եկել Եոհաննէսբուրգում՝ պահանջելով դատապարտել հայերի ցեղասպանութիւնը Թուրքիայում: 1992ին Եոհաննէսբուրգում կայացած ՀԱՀի ազգութիւնների փառատօնում հայկական ցուցափեղկը ճանաչուել է լաւագոյնը: 1993-1995ին 20-25 հայ ընտանիք ՀԱՀ են տեղափոխուել Բուլղարիայից եւ Հայաստանից, սակայն յետագայում ՀԱՀի կառավարութիւնը խստացրել է ներգաղթային քաղաքականութիւնը, եւ հայերի հոսքը նուազել է: 2003ի տուեալով՝ ՀԱՀում բնակւում է շուրջ 300 հայ[86]:

Հարաւ-արեւմտեան Կոտ դ'Իւուարի մայրաքաղաք Աբիջանի հայերի մասին 1990ականների կէսի սփիւռքահայ մամուլում տպագրուած մի թղթակցութեան մէջ ասուած է, որ հակառակ թուի սակաւութեան եւ միմեանց հետ ոչշատ կապուածութեանը, նրանք նուիրուած են հայ կեանքին, հայ ոգին վառ է նրանց մէջ, հնարաւորութիւններ են ստեղծում հաւաքուելու, կատարելու հայկական երգեր, պատրաստում են հայկական ճաշատեսակներ, քննարկում Ղարաբաղի խնդիրը եւն.: Ափրիկէի այդ ամէնից եւրոպականացած քաղաքում հաստատուել են հայեր Բէյրութից, Ստամբուլից, Ամմանից, Ֆրանսիայից եւ Արգենտինայից: Յատկապէս Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով տասնեակ հայեր են հաստատուել այս երկրում: Գործել է «Կարօ» վարսաւիրանոցը, որի յաճախորդները եղել են Աբիջանի աւագանիի տիկնայք[87]:

Արտառոցութեան աստիճանի է հասնում հայ առաքելական եկեղեցու ներկայութիւնը... Զաիրում (այժմ՝ Կոնգոյի կազմի մէջ): Այս մասին վկայել է արգենտինահայ պատմաբան Նարսիսօ Բինայեան-Կարմոնան, որն այդ մասին անձամբ լսել է 1968ին Վազգէն Ա. Կաթողիկոսից, վերջինիս Արգենտինա կատարած այցելութեան ժամանակ: «*Մի խումբ նորադաւաններ հասան Սուրբ Էջմիածին եւ խնդրեցին ընդունուել եւ ձեռնադրուել այնտեղ: Վազգէն Կաթողիկոսը փաստի առաջ կանգնեց. Հայաստանեայց Եկեղեցին ազգային է, սակայն նաեւ Տիեզերական եկեղեցու մաս է կազմում եւ չի կարող շրջանցել Աւետարանը քարոզելու պարտականութիւնը: Հետեւաբար ընդունեց զաիրցիներին, որոնք ուսումնասիրեցին ամէնը, ինչ որ պէտք էր ուսումնասիրէին, ձեռնադրուեցին եւ ապա իրենց երկիրը մեկնեցին, որտեղ կազմակերպեցին Զաիրի Հայաստանեայց Եկեղեցին, որ, առանց ենթակայութեան յարաբերութեան, հին հայերէնով արարողութիւններ է կատարում եւ գործադրում է աւանդական բոլոր օրէնքները: 1985ին Լագոսում (Նիգերիա) պրոֆեսոր Բուակասան Կինչասայից* (Զաիրի այդ ժամանակուայ մայրաքաղաքը - Ա.Բ.) *հաստատեց նրա* (Զաիրի Հայաստանեայց Եկեղեցու - Ա.Բ.) *գոյութիւնը եւ երկու օր անց, անվերջանալի հարցումներ տուեց անյագ հետաքրքրութեամբ, հայկական հարցերի եւ խնդիրների ամենաբազմապիսի երեսների մասին*»[88]:

Հայկական եկեղեցի գոյութիւն ունի հարաւային Ափրիկէի Սուազիլենդ պետութիւնում: Գրամեքենաների առեւտրական, այժմ հանգուցեալ Գրիգոր Դերբալեանը Սայբեբէի (սոճիների հովիտ) կոչուող անբնակ վայրում կառուցել է Սուրբ Յարութիւն փոքրիկ եկեղեցին: 1989ին այնտեղ այցելել է մի յոյն քահանայ եւ մկրտել երկու հոգու:

Ըստ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի նախարարութեան www.armeniadiaspora.com կայքէջի՝ 2002ին ափրիկեան երկրների հայ բնակչութիւնն ունեցել է հետեւեալ պատկերը՝

ՀԱՀ՝ 200, Զիմբաբուէ՝ 28, Կոտ դ'Իւուար՝ 20, Գանա, Սենեգալ՝ 15, Զամբիա՝ 10, Սուազիլենդ՝ 8[89]:

Ափրիկահայերից կարող ենք յիշել հետեւեալ անունները.- իրաւաբան Վահէ Պայրամեանը (ծն. 1900, Կիպրոս) 1944ին տեղափոխուել է Նիգերիա, պաշտօնավարել «Արտենո» ընկերութիւնում, եղել հողային կոմիսարի իրաւաբանական խորհրդատու, Գերագոյն Ատեանի Ոստիկանական Դատաւոր եւ Աւագ Քարտուղար: Մի քանի տարի բնակուել է ափրիկեան Սիէռա-Լէօն պետութիւնում, աշխատել որպէս իրաւաբանական խորհրդատու, Գերագոյն Դատարանի Աւագ Քարտուղար, Ոստիկանական Դատարանի Դատաւոր եւ գլխաւոր դատաւոր:

1948ին հարաւային Ափրիկէում է հաստատուել ծնունդով տրապիզոնցի գործարար Վաչէ Գարագաշեանը, որը Բ. Աշխարհամարտից առաջ յաջողապէս հիւսուածեղէնի արտադրութեամբ է զբաղուել Ռումինիայում: Խուսափելով համայնավարական համակարգից՝ նա մեկնել է նախ Անգլիա, Եգիպտոս, այնուհետեւ հաստատուել է ՀԱՀում: Հիւսուածեղէնի ճարտարարուեստի իր գիտելիքները նա գործադրել է նախ Քիմբըրլիում, որտեղ հիմնել է մի փոքր գործարան: Նրա գործունէութիւնը գրաւել է «ադամանդի արքայ» Սըր Էռնըսթ Օփենհայմէրի ուշադրութիւնը: Վաչէ Գարագաշեանը բացել է հարաւային Ափրիկէում մետաքսեայ շալի արտադրութեան առաջին գործարանը, որը տարեկան արտադրել եւ վաճառել է երկու միլիոն մետաքսէ շալ: Որոշ ժամանակ անց Գարագաշեանն իր արտադրութիւնը տեղափոխել է Ռոսլին (Փրեթորիայից 20 կմ. հիւսիս-արեւմուտք), իրականացնելով կառավարական ծրագիրը՝ քաջալերելու ճարտարարուեստի ապակենտրոնացումը սեւամորթների նահանգների սահմանների վրայ: Այդ ժամանակ Ռոսլինը ամայի մի վայր էր, եւ ոչ ոք չէր կարող գուշակել, թէ մի օր այն դառնալու է արդիւնաբերական մեծ կենտրոն: 1970ականներին Վաչէ Գարագաշեանի ընկերութիւնը միակն է եղել ՀԱՀում, որ հիւսուածեղէնի ճարտարարուեստի համար արտադրել է ջերմափոխադրիչ տպագրական թուղթ, տարեկան երկու միլիոն մետր սաւան, հագուստեղէն եւ բազմատեսակ տպագրուած կտորեղէն, որը մինչ այդ ՀԱՀը ներածել է[90]:

Հաւանաբար միեւնոյն անձն է (եւ կամ ազգակցական կապ ունի) Ռոլանդ Գարագաշեանը, ՀԱՀի «Մետաքսի եւ Տեքստիլի Արդիւնաբերութիւն» գործարանի տնօրէնը: Սա միակ գործարանն է հարաւային Ափրիկէում, որ արտադրում է խանգա (զգեստի տեսակ, որ հագնում են յատուկ առիթներով, նաեւ որպէս առօրեայ հագուստ): Ի դէպ, Ռոլանդ Գարագաշեանը եղել է ՀԱՀի Գաղութային Վարչութեան ատենապետը:

Քենիայի հայերի մէջ յիշւում է նաեւ առեւտրական Արեւանոյշ Բիլինգէմը (ծնեալ Գալստեան): Իրանահայ այս կինն ամուսնացել է անգլիացի զինուո-

ական հետ, հաստատուել Նայրոբիում, զբաղուել սուրճի առեւտրով: Զարգացած կին է եղել: Արեւանոյշ Բիլինգէմն ունեցել է մի որդի՝ Դոնալդ, որը 1955ին զոհ է գնացել քենիական Մաու Մաու շարժմանը[91]:

Ի. դարի կէսին տաս տարի Ափրիկէում է բնակուել փարիզաբնակ հայ լրագրող Գէորգ Վարդանեանը: 1961ին Փարիզի ռուսական մամուլում հրատարակած մի յօդուածում նա վկայել է, որ շատ եւրոպացիներ եւ ռուսաստանցիներ Ափրիկէում իրենց շատ աւելի վատ են պահել, քան սպիտակամորթները Ամերիկայի հարաւային նահանգներում[92]:

Ներկայումս բելգիաբնակ, ծնունդով սիրիահայ գործատէր Հայկ Արսլանեանը ճանապարհորդել է Հնդկաստանում, Եմէնում, Գամբիայում: Ափրիկէում զբաղուել է աղամանդի հանքախուզմամբ եւ գնել ալմաստի հանքեր: Առեւտրական կենտրոններ է հիմնել Կենտրոնական Ափրիկեան Հանրապետութիւնում, Չատում եւ Կոնգոյում: Աբիջանում նրա գրասենեակի ղեկավարը 1990ականներին եղել է Վիգէն Տէր-Սարգիսեանը[93]:

1960ականների կէսերից Արեւմտեան Ափրիկէի երկրներում եւ մասնաւորապէս Կոտ դ'Իւուարում է իր գործունէութիւնը ծաւալել ֆրանսահայ գործատէր Ռայմոն Եզեկիէլեանը: Ծնուել է Փարիզում, աղրիանապոլսեցի հօր ընտանիքում: Կոտ դ'Իւուարում նա բացել է 30ից աւելի գրասենեակներ, Revelon ֆիրման, ներմուծել վիսքի եւ այլ ըմպելիքներ: Նրան են պատկանել նաեւ մի շարք շտեմարաններ: Եզեկիէլեանին անուանել են արեւմտեան Ափրիկէի հայոց դեսպան: Առաջին՝ ճապոնուհի կնոջից ունի Վարդուհի դուստրը, իսկ մարիտանուհի կնոջից՝ Անոյշ դուստրը, ծնուած Սենեգալում: *«Երկուքն ալ հայերէն կը խօսին: Հայաստան այցելած են եւ իմ հայերէնս կը սրբագրեն: Հայ մնալը կարեւոր է, ու հայ կրնանք մնալ մեր լեզուն սորվելով միայն: Հպարտ եմ, որ երկու աղջիկներս ալ հայերէն կը խօսին ու հայ կը զգան: Դիւրին չէր այս ընել, բայց ըրի»*,- ասել է Եզեկիէլեանը[94]: Ի դէպ, Անոյշ Եզեկիէլեանն այժմ մասամբ բնակւում է Հայաստանում, 2007ին նկարահանուել է Վրէժ Քասունիի Maybe Love, Maybe Not շարժանկարի գլխաւոր դերում: Այժմ Ռայմոն Եզեկիէլեանը մեծ աշխատանք է տանում յատկապէս յանուն Արցախի տնտեսական զարգացման:

Կոտ դ'Իւուարում է բնակւում նաեւ հայազգի երգչուհի Մալաք Մաջարը, ծնուած Լիբանանում: Աբիջանի արաբական գաղութի այս սիրուած երգչուհին կատարում է արաբական եւ լիբանանեան հայրենասիրական եւ սիրային երգեր, յատկապէս Ըմ Քալսումի, եւ լիբանանցի երգչուհիներ Սաբահի, Ֆէյրուզի երգացանկից[95]:

1960ից, երկրի առաջին նախագահի՝ Ֆելիքս Հուֆուէ-Բուանյիի եւ նրան յաջորդած երեք նախագահների օրօք Կոտ դ'Իւուարի Նախագահական Պալատի Արձանագրութեան Բաժնի ղեկավարն է եղել Ժորժ Ուենիէնը որը կէսհայ է, Աւետիքեան ազգանուամբ մի լիբանանցի հայուհու որդին[96]: 2007ին իր ծառայութիւնների համար Ուենիէնը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի կողմից պարգեւատրուել է «Պատուոյ Լեգէոն»ի Սպայի շքանշանով:

1967ին արեւելեան Ափրիկէի Տոգօ պետութեան մայրաքաղաք Լոմէում հաստատուել է գործարար, ծնունդով բէյրութցի Վարդգէս Պագալեանը: Լիբանանում նա առաջինն է բացել մակարոնի գործարան եւ ալրաղաց: Տոգոյում զբաղուել է ցորենի եւ ալիւրի արդիւնաբերութեամբ եւ վաճառքով: Կարճ ժամանակում դարձել է այդ բնագաւառում մենիշխան ոչ միայն Տոգոյում, այ-

լեւ հարեւան Գանայում եւ Բենինում: Լոմէի միակ հայ բնակիչ Վարդգէս Պագալեանը եւ իր կին Լիզբէթը յարգուած անձինք են Տոգոյի հանրապետութեան կողմից, լաւ կապեր են ունեցել կառավարական շրջանակների եւ մասնաւորապէս նախագահ Այասիմայի հետ: Որդին շարունակել է հօր գործը[97]: Այսօր Լոմէում գործում է Societé Générale des Moulins du Togoն, որի գլխաւոր տնօրէնը նոյնինքն Վարդգէս Պագալեանն է:

Աքրայում (Գանա) շինարարական մեծ գործունէութիւն են ծաւալել Գասարճեանները, որ մտերիմ են եղել երկրի նախագահ Ջերի Ռոլինգզի հետ: Նուիրուած են եղել հայ ազգային կեանքին, Բէյրութում հաստատել են մի վարժարան[98]:

Ճարտարագէտ, առեւտրական Գուրգէն Գործունեանը եղել է սուրճի առաջին արտածողը Կամերունում: Արժանացել է «Արժանեաց Կարգի Ասպետ»ի շքանշանի: Կամերունի առեւտրական կեանքում աչքի է ընկել նաեւ եղբայրը՝ Սուրէն Գործունեանը[99]:

Մօտ 1956ին Լիբանանից արեւելեան Ափրիկէի Լիբերիա պետութիւն է տեղափոխուել աղամանդագործ Արտաւազդ Տապպաղեանը: Նա դարձել է երկրի նախագահ Ն. Վ. Թուպմէնի անձնական ոսկերիչը: Նրան է պատկանել մայրաքաղաք Մոնրովիայի միակ գոհարավաճառատունը: Մասնակցել է միջազգային ցուցահանդէսների (Նիգերիա, Քենիա, Գանա, Զաիր)՝ ներկայացնելով Լիբերիան: 1971ին Լիբերիայի նախագահ Թոլպերտին նուիրել է վերջինիս դիմանկարով բրոնզէ մեդալ: Այս իրողութեանը լայնօրէն անդրադարձել է լիբերիական մամուլը[100]:

Ալեքսանդրիայում ծնուած Յովհաննէս Յովհաննիսեանը (Օհաննէս Օհանիսեան) կրթութեամբ իրաւաբան է: Նա հարաւ Ափրիկէում հաստատուել է 1967ին եւ սկսել զբաղուել գործարարութեամբ: Եոհաննէսբուրգի կենտրոնում է գտնւում նրա հիմնած ընկերութիւնը, որը զբաղւում է ճամպրուկների արտադրութեամբ եւ վաճառքով: Եղել է Հարաւային Ափրիկէի Հայկական Ընկերակցութեան ատենապետը[101]:

Մասնագիտութեամբ քարտէզագիր Գրիգոր Էօճիւրեանը որոշ ժամանակ բնակուել է Զիմբաբուէում, այնուհետեւ 1980ականներին տեղափոխուել Լոս Անջելես: Կազմել է Մեծ Եղեռնի քարտէզը: Նրա վկայութեամբ՝ Զիմբաբուէում հայութիւն չկայ, եղել է 12-15 հայ ընտանիք, որ յետագայում գաղթել է ԱՄՆ, Կանադա եւ ՀԱՀ: Վերջինում, Էօճիւրեանի վկայութեամբ, բնակւում են մօտ 120 հայեր[102]:

Զամբիայում է բնակւում վիրաբոյժ, College of Surgeons of East, Central and Southern Africa (COSECSA)ի նախագահ Գրիգոր Երզնկացեանը (Ertzingatsian): Ծնուել է Աղիս Աբեբայում: Հաւանաբար որդին է եթովպահայ նկարիչ Հայկ Երզնկացեանի: Ստացել է վիրաբոյժ-ուռուցքաբանի մասնագիտութիւն Իրլանդիայում, որի քաղաքացի է: 1979ին հաստատուել է Զամբիայում: 1995ին ստացել է աւագ ուսուցչապետի աստիճան: Նա Վիրաբուժական Քոլէջների Միջազգային Դաշնութեան անդամ է: 2006ին Երզնկացեանն ընտրուել է ափրիկեան ութ երկրներ (Եթովպիա, Քենիա, Տանզանիա, Ուգանդա, Մալաուի, Մոզամբիկ, Զամբիա, Զիմբաբուէ) ընդգրկող COSECSA վիրաբուժների միասնական կազմակերպութեան նախագահը: Երզնկացեանը բազմիցս եղել է Հայաստանում, մասնակցել հայ բժիշկների համագումարներին[103]:

Ուշագրաւ է, որ ափրիկեան երկրներում եղել են հայերէն ստեղծագործող բանաստեղծներ. Յովհաննէս Հայկազունը Նիգերիայում, Յովսէփ Թըգրրեանը (աշխատակցել է ամերիկահայ *Հայաստանի Կոչնակ*ին եւ *Նոր Օր*ին[104]) Քենիայում եւ Խ. Լուսիկեանը Մադագասկարում[105]: Ի դէպ, Յովսէփ Թըգրրեանի թոռը՝ Եսօ Թըգրրեանը, եղել է ֆրանսիական օդանաւային մի ընկերութեան առեւտրական ներկայացուցիչը Քենիայում, Ուգանդայում եւ Տանզանիայում:

Ափրիկեան երկրներում եղել են նաեւ հայ արուեստագէտներ եւ գիտնականներ: 1961ին Նիգերիայում է հաստատուել լիբանանահայ գեղանկարիչ Վահէ Կէօքկէօզեանը (ծն. 1937), որը դարձել է տեղի յայտնի նկարիչներից:

Երաժիշտ եւ ճարտարապետութեան լուսաւորութեան մասնագէտ է Փոլ Հայկ Փամպուքեանը, ծնուած 1949ին, Եոհաննէսբուրգում: Ծնողները հարաւային Ափրիկէ են գաղթել 1948ին, Աթէնքից (հայրը եղել է ծագումով Մարաշից, մայրը, ծնեալ Վարվառեան, Բուրսայից): Հինգ տարի երաժշտութիւն է ուսանել Քէյփթաունի Համալսարանում, սովորել է նուագել կլառնէտ, այնուհետեւ մասնագիտացել է Լոնդոնի Գիլդհոլ երաժշտական դպրոցում: Երաժշտութիւն է գրել թատրոնի եւ հեռատեսիլի համար: Զբաղուել է նաեւ հայ երաժշտութեամբ, հետաքրքրուել յատկապէս հայ հոգեւոր երգարուեստով: 1970ականների վերջին հարաւ-ափրիկեան հեռատեսիլով ելոյթ է ունեցել նուագավար Լորիս Ճգնաւորեանի հետ (վերջինս հարաւ Ափրիկէ էր եկել ռադիոկայանի սիմֆոնիկ նուագախումբը ղեկավարելու համար): Առաջին անգամ բամաթիւ հարաւ-ափրիկացիներ ճանաչել են իրենց մէջ բնակուող փոքրաթիւ համայնքին[106]: 1977ից զբաղուել է լուսաւորութեան ձեւաւորմամբ, դարձել Փրեթորիայի Պետական Թատրոնի գլխաւոր լուսային ձեւաւորողը: Եղել է համահիմնադիրը Production Projects լուսաւորման եւ բեմադրութեան ընկերութեան, որ մասնագիտացած է լուսաւորման ձեւաւորման եւ վաճառքի մէջ: Այս ընկերութեան կազմում Փամպուքեանը մասնակցել է աւելի քան 500 արդիւնաբերական ծրագրերի՝ միջազգային մի շարք խոշոր հաստատութիւնների (BMW, Mercedes Benz, Ford, Toyota, VW, Alfa Romeo, IBM, SAPPI, World Gold Council) հետ, որոնք նախագծեր են իրականացրել Փարիզում, Նիւ Եորքում, Բազէլում, Վենետիկում, Հաուայում եւ Բեռլինում: 1990ին Եոհաննէսբուրգում հիմնել է Paul Pamboukian & Associates Lighting Design լուսաւորութեան ձեւաւորման կենտրոնը, որ զբաղւում է ճարտարապետական կառոյցների, ներքին յարդարման, բնապատկերի եւ թատերական լուսաւորութեան ձեւաւորմամբ: Այդ թուականից ի վեր աշխարհի բազմաթիւ երկրներում Փամպուքեանը իրականացրել է 600ից աւելի ճարտարապետական նախագծեր (հիւրանոցներ, առողջարաններ, հանրային շինութիւններ եւն.): Հայազգի մասնագէտը յաճախակի հանդէս է գալիս լուսաւորութեան ձեւաւորման վերաբերեալ դասախօսութիւններով եւ արհեստավարժ անդամ է Եւրոպական Լուսաւորութեան Ձեւաւորողների Ընկերակցութեան (ELDA)[107]:

Ափրիկեան պետութիւններում աշխատել են նաեւ ամենատարբեր երկրների հայեր, յատկապէս Ֆրանսիայից: Այսպէս, ֆրանսահայ արդիւնաբերող Միհրան Էկնայեանը (ծն. 1892, Փարիզ) զբաղուել է աղամանդի արդիւնաբերութեամբ, մինչեւ 1945ը եղել է Կոտ դ'Իւուար պետութեան Հանքավայրերի Հետազօտման եւ Շահագործման Միութեան նախագահը: Ֆրանսահայ պետական գործիչ Արշակ Ժաք Մուրատեանը (ծն. 1910, Կոնշ, Օռ նահանգ)

պաշտօնավարել է ափրիկեան Չադ, Սենեգալ, Մադագասկար պետութիւններում, Ալֆոնս Գույի ծածկանուամբ հրատարակել է արեւելագիտական աշխատութիւններ, այդ թւում՝ *Իսլամն Արեւմտեան Ափրիկէում*[108] գիրքը: Ֆրանսահայ ճարտարապետ Ժորժ Արսէնեանի նախագծով շէնքեր են կառուցուել Կոնգոյում[109]:

Որոշ ժամանակ Կամերունում է բնակուել լիբանանահայ, ներկայումս կանադաբնակ քանդակագործուհի Եւգինէ դը Գրէֆը (Եփրեմեան, ծն. 1934): Ճարտարագէտ, Երեւանի Ճարտարագիտական Ինստիտուտի շրջանաւարտ, նոյնպէս ներկայումս կանադաբնակ Անահիտ Քէօսէեանը (ծն. 1940) 1972-1973ին աշխատել է Ալժիրում, իսկ 1973-77ին՝ Նիգերիայում, դասաւանդել Ահմէդու Բելլօ Համալսարանում: Այնտեղ ծրագիր է մշակել Մաքուրդիում (Նիգերիա) 20 հազար բնակիչների բնակավայր կառուցելու համար[110]:

Լիբանանահայ երեք գրող՝ Պօղոս Գուբելեանը, Հայկ Նագգաշեանը եւ Արամ Սեփեթճեանը, որոշ ժամանակ բնակուել են ափրիկեան երկրներում՝ (առաջինը՝ Սիէռա-Լէօնում, միւսները՝ Նիգերիայում) եւ իրենց ստեղծագործութիւններում պատկերել են այդ երկրի եւ նրա բնակիչների կեանքը: Սեփեթճեանի *Ես Սեւ Եմ, Բայց Գեղեցիկ*[111] վիպակը պատկերում է Նիգերիայում հաստատուած հայերի կեանքը: Հայկ Նագգաշեանի *Ափրիկէի Անտառներու Մէջ*[112] պատմուածքների ժողովածուն (առաջաբանը՝ Վախթանգ Անանեանի) եզակի է հայ գրականութեան մէջ, քանի որ ներկայացուող որսորդական պատմուածքների միջավայրը ոչ թէ հայաստանեան բնաշխարհն է, այլ ափրիկեան ջունգլիները եւ սաւաննաները...

Տարբեր առաքելութիւններով ափրիկեան երկրներում գործել եւ պաշտօնավարել են հայեր աշխարհի տարբեր երկրներից, նաեւ Հայաստանից: Ամերիկահայ բժիշկ-ախտաբան Ռոբերթ Նալբանդեանը (ծն. 1922, Միչիգան) 1970ին ղեկավարել է ափրիկեան երկրներից մէկում համաճարակի դէմ տարուող պայքարը[113]: Տարիներ շարունակ ախտաբանութիւն է դասաւանդել Միչիգանում: Մէկ այլ ամերիկահայ բժիշկ եւ կենսաքիմիկոս Միհրան Կիւլեանը (ծն. 1930, Ուեհոքըն), տարիներ շարունակ պաշտօնավարել է ափրիկեան երկրներում, համագործակցել հումանիստ Ալբերտ Շուայցէրի հետ[114]: 1980ին Մադագասկարում օգտակար հանածոների արշաւախումբը ղեկավարել է հայաստանցի երկրաբան Լեւոն Յակոբեանը: Մադագասկարում այդ արշաւախումբը յայտնաբերել է բիւրեղապակու հանքավայրեր: Այդ առիթով Մադագասկարի եւ ԽՍՀՄի միջեւ կնքուել են պայմանագրեր, արշաւախմբի գլխաւոր ճարտարագէտ Լեւոն Յակոբեանին յանձնուել է երկրի բարձրագոյն պարգեւը՝ «Ասպետ»ի շքանշանը եւ Մադագասկարին մատուցած ծառայութիւնները վաւերագրող մի պատուոգիր[115]:

Պատմաբան Հմայեակ Մարտիրոսեանը (1926-2008) 1973-1976ին եղել է Գանայում ԽՍՀՄ դեսպանատան Առաջին Քարտուղար: Շուեդիայում բնակուող ճարտարապետ Պիէռ Տէր-Յակոբեանը (ծն. 1927) որոշ ժամանակ եղել է Գաբոնի ներկայացուցիչը Շուեդիայում՝ շնորհիւ Փարիզում իրեն դասընկեր եղած Գաբոնի նախագահ Օմար Բոնգոյի[116]:

Եղել են նաեւ հայազգի ափրիկագէտներ: Ֆրանսիայի ճանաչուած ափրիկագէտներից է պատմաբան, լրագրող, պետական գործիչ, Ժաք Բուլինը (Յակոբ Բաթմանեան, ծն. 1924, Հելիոպոլիս, Եգիպտոս): Նա 1963-1969ին եղել է Կոտ դ'Իւուարի նախագահ Հուֆայէթ Բոինիի, 1965-72ին՝ Նիգէրի նա-

խագահ Դիորի Համանիի քաղաքական եւ տնտեսական խորհրդականը: Փարիզում հրատարակել է թերթ Նիգէրի համար, տեղեկատու գրականութիւն՝ Կոտ դ'Իւուարի վերաբերեալ: 1962ին Լոնդոնում հրատարակել է *Արաբական Գործօնն Ափրիկէում* անգլերէն գիրքը, արժանացել է Կոտ դ'Իւուարի, Նիգէրի եւ Գաբոնի հանրապետութիւնների ազգային շքանշաններին:

Ռուսաստանի յայտնի ափրիկագէտներից է հայազգի պատմաբան Կարէն Բրուտենցը (ծն. 1924), որը Մոսկուայում լոյս է ընծայել *Ասիայի եւ Ափրիկէի Ազգային-ազատագրական Պայքարը* (1959), *Ընդդէմ Ժամանակակից Գաղութատիրութեան Գաղափարախօսութեան* (1961), *Գաղութատիրութիւն Առանց Կայսրութեան* (1963), *Ժամանակակից Յեղափոխական Ժողովրդավարութիւնը* (1968), *Ժողովուրդների Ստրկացման Մի Նոր Ձեւ* (1969), *Գաղափարների Պայքարն Արդի Աշխարհում* (1978), *Ազատագրուած Երկրները 70ական Թուականներին* (1979) եւ այլ ռուսերէն աշխատութիւններ:

Ափրիկեան մշակութային ժառանգութեան պահպանման գործին իւրովսանն նպաստել է նաեւ հայազգի ռուս բանասէր Գայիանէ Անպէտքովա-Շառովան (1925-2004), որը Պետերբուրգի Համալսարանում աշխատելու տարիներին ափրիկեցի ուսանողներից գրառել է հեքիաթներ, ամփոփել *Մամպրուսիի Հեքիաթներ* (1967) եւ *Անգոլայի Ժողովուրդների Հեքիաթներ* (1975) ռուսերէն ժողովածուներում[117]:

Տարբեր երկրների հայ մտաւորականներ եւ արուեստագէտներ ներշնչուել են Ափրիկէով, սեւամորթների պատմութեամբ եւ ինքնատիպ մշակոյթով: Դեռ 1936ին տնտեսագէտ Վահան Տոտոմեանցը հանդէս է եկել «Քոռփերացիան Նեգրերի Մէջ» յօդուածով[118]: Ամերիկահայեր Եզնիկ Ազնակեանը բանախօսել է սեւամորթների գրականութեան վերաբերեալ, Քերոլ Սարգսեանը Ֆլորիդայում 1963ին՝ սեւամորթների հակամարտութեան մասին[119] եւն.: Ռուսագիր հայ գրող Պետրոնի Ամատունին (1916-1982) օդաչուի մասնագիտութեան բերումով շրջել է Ալժիրում, Քենիայում եւ այլ ափրիկեան երկրներում, տպաւորութիւններն ամփոփել գրքերում[120]: Խորհրդային երգահան Կարէն Խաչատրեանը (ծն. 1920) գրել է Զանզիբարի (1964) եւ Սոմալիի (1972) պետական օրհներգերը[121]: Ամերիկահայ պարաղիր Լէօ Ղարիբեանը 1976ին Նայրոբիում բեմադրել է «Կաբարէ» ներկայացումը: Ամերիկահայ երաժշտագէտ Ջոն Սարեանը աշխատութիւն է գրել ափրիկեան երաժշտութեան մասին, իսկ ռուսահայ երգահան Սերգէյ Բալասանեանը (1902-1982), ի թիւս աշխարհի տարբեր ժողովուրդների երգերի, ձայնագրել եւ մշակել է նաեւ ափրիկեան ժողովուրդների մի շարք երգեր: Ամերիկահայ բեմադրիչ Քարլա Կարապետեանը նկարահանել է «Իմ Ընկեր Վարձկանը» վաւերագրութիւնը (2005)՝ Հասարակածային Գինիայում յեղաշրջման փորձի մասին[122]:

Նորագոյն ժամանակներում, Հայաստանի Հանրապետութիւնից, եղել են նաեւ Ափրիկէ արտագաղթի դէպքեր: Սակաւաթիւ հայուհիներ ամուսնութիւններ են կնքել ափրիկէցիների հետ: Այսպէս, 1988ից Անգոլայի մայրաքաղաք Լուանդայում է ապրում ծնունդով բաքուեցի հայուհի, անգոլացու հետ ամուսնացած Լարիսա Աւակիմովա-Ժօաօն (Յովակիմեան, ծն. 1964), որը դաշնամուրի դասեր է աւանդում Լուանդայի երաժշտական քոլէջներում: Ստոյգ թուաքանակ չկայ այդ երկրի հայերի վերաբերեալ[123]. բոլորը նշում են 300-400 հոգի, որոնք հիմնականում գրասենեակային աշխատողներ են, առեւտրականներ եւ արհեստաւորներ: ՀԱՀի հայերը միաւորուած են Եոհաննէսբուր-

գում գործող Հարաւային Ափրիկէի Հայեր կազմակերպութեան մէջ[124]: Նրանք նշում են Հայաստանի Հանրապետութեան անկախութեան եւ միւս ազգային տօները: Երեւանցի Նաիրա Տէր-Մարգարեանը աւարտել է Եոհաննէսբուրգի Համալսարանի Տնտեսական եւ Կառավարման Գիտութիւնների բաժինը: 1989-2006ին Մոզամբիկի Կրթութեան նախարարութիւնում են աշխատել Վրէժ եւ Ժաննա Յակոբեանները (ներկայումս բնակւում են Միացեալ Թագաւորութիւնում): Երեւանցի Կարէն Բարսամեանը 2008ի դրութեամբ աշխատում է Մոզամբիկի ՄԱԿի պարենային ծրագրում որպէս հաղորդակցութեան տեխնոլոգիաների ղեկավար: 1995ից Զիմբաբուէում է բնակւում տեխնիկական գիտութիւնների թեկնածու, երեւանցի Էդուարդ Մայիլեանը, որ զբաղւում է առեւտրով: 2001ին հայ մամուլին տուած հարցազրոյցում նա պատմել է, որ հայերը հիմնականում աշխատանքի են մեկնում հիւսիսային Ափրիկէի երկրներ եւ Նիգերիա: Հայերը Զիմբաբուէում զբաղւում են գրասենեակային աշխատանքով, առեւտրով, ոսկերչութեամբ եւ այլ արհեստներով, աշխատում շինարարութիւնների վրայ: Ըստ նրա՝ *«Ափրիկէում մեծացող հայերի զաւակները ոչ իսկ ցանկանում են վերադառնալ Հայաստան»*[125]:

Հայերի անունները ԻԱ. դարի սկզբի Ափրիկէում յիշատակւում են նաեւ ոչ-դրական կողմերով: 2007ի Մարտի 15ին «Արմէնպրէս»ը հաղորդագրութիւն է տարածել Քենիայում ծագած քաղաքական գայթակղութեան մասին, որի կիզակէտում են յայտնուել հայաստանցիներ Արթուր Սարգսեանը եւ Արթուր Մարգարեանը, որոնց միջազգային լրատուամիջոցներն ու քենիական մամուլը ներկայացրել են որպէս եղբայրներ: Քենիայի ընդդիմութեան առաջնորդներից մէկը՝ Ռէյլա Օդինգան, հայազգի եղբայրներին մեղադրել է, որ նրանք որպէս վարձկաններ օգտագործուել են Քենիայի իշխանութիւնների կողմից որոշ լրատուամիջոցների վրայ յարձակումներ գործելու համար: Սարգսեանը եւ Մարգարեանը հերքել են մեղադրանքները[126]:

## ՀԱՅ-ՍԵՒԱՄՈՐԹ ՇՓՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հայերը սեւամորթների հետ շփուել են բոլոր ցամաքամասերի ամենատարբեր երկրներում, ընդսմին՝ Հայաստանում եւ յարակից երկրներում...: Աղասի Այվազեանն իր «Նեգրոնք» պատմուածքում ներկայացրել է ԺԹ. դարում զինուորական Մեժլումովի կողմից Իրանից Հայաստան բերուած սեւամորթ քոյր եւ եղբօր՝ Ալիի եւ Լէյլայի կեանքի պատմութիւնը, որը պատմական հիմք ունի: Այդ սեւամորթներն ապրել են Ալեքսանդրապոլում, եւ նրանց տոհմն այդուհետ կոչուել է «Նեգրոնց Մեժլումովներ»: Լէյլան մի հայից ունեցել է երկու զաւակ, իսկ Ալին յետագայում բնակուել է Թիֆլիսում: Հաւանաբար հենց այդ սեւամորթին է նկատի ունեցել արձակագիր Միքայէլ Մանուէլեանն իր «Նեգրը» մանրապատումում. *«Չեմ յիշում երբ էր, քանի տարի առաջ, բայց վաղուց էր, շատ վաղուց: Նա միշտ նստած էր իր տան դռան առջեւ արեւի տակ, տաքանում էր, նա փաթաթուած էր տաք վերարկուի մէջ, բայց գարնան արեւը նրա պաղած արիւնը չէր կարողանում ջերմացնել: Ժամերով նստած էր արեւի տակ, բայց չէր տաքանում: Այնքան մռայլ ու տխուր էր նրա դէմքը: Ես երբեք նրան չեմ մոռանալ. սեւ դէմքի վրայ ճերմակած գանգուր մազերը, աւելի էին խտացնում նրա թշուառութիւնը: Նա յիշեցնում էր մայր երկրից խլուած տրոպիք բոյսի, որ խամրում մեռնում է հիւսիսում: Նա արեւի տակ նստած երազում էր իր երկրի տաք արեւը... Ով գիտէ բախտի որ քմահաճոյքովն էր նա*

*ընկել այս ցուրտ երկիրը։ Ես նրան տեսնում էի ամէն օր իր դռան առաջ կծկուած։ Բայց մի շաբաթից աւելի է, որ նա այլ եւս չկար. ամէն օր տուն գնալիս էլ չէի հանդիպում նրան։ Նա մեռաւ։ Այնքան չտաքացաւ, որ վերջը մեռաւ»*[127]: Յայտնի է նաեւ, որ 1910ին մի վրացի վաճառական Թիֆլիս է բերել մի վեցամեայ սեւամորթ երեխայի՝ Բաշիր Չամբէին, «վասն զուարճութեան», ինչպէս ինքն է ասել: Այս սեւամորթը տարիներ անց դարձել է հրշէջ: Ամուսնացել է հայուհու՝ Ելենա Դանիէլեանի հետ: Նրանց սերունդները խառնուել են ռուսների եւ վրացիների հետ[128]:

Նուազ հետաքրքիր չեն հայ-սեւամորթ առնչութիւնները վաղ Խորհրդային Հայաստանում: Դեռեւս 1923ին գրաքննադատ Արտաշէս Կարինեանը հանդէս է եկել «Նեգրերի Գրականութիւնը» յօդուածով[129]: 1927ին Խորհրդային Հայաստան է այցելել Ամերիկայի սեւամորթ կոմերիտականների ղեկավար Ջոնսոնը, որը սովորելիս է եղել Մոսկուայում: Նա ծանօթացել է Հայաստանի Կոմերիտմիութեան աշխատանքներին: Յատուկ Երեւանի *Աւանգարդ* թերթի համար գրել է մի յօդուած, որ սկսել է *«Ամերիկայի ճնշուած նեգր երիտասարդութեան անունից ես ողջունում եմ ձեզ՝ Հայաստանի ընկերներ»* կոչով, այնուհետեւ ներկայացրել սեւամորթների հանդէպ կիրառուող ցեղային խտրականութիւնն ԱՄՆում, նրանց լինչահարման, մարդկային իրաւունքների պայքարի մասին: *Աւանգարդ*ում յօդուածի հետ մէկտեղ տպագրուել է Ջոնսոնի լուսանկարը ՀԼԿԵՄ Կենտկոմի Քարտուղար Լ. Մարտիրոսեանի հետ[130]: Յիրաւի, չափազանց տարաշխարհիկ է թւում սեւամորթ կոմերիտականի ներկայութիւնը 1920ականների վերջի նոր խորհրդային տարազի մէջ մտնող գաւառական Երեւանի խորքին...

1935ին Հայֆիլհարմոնիայում համերգով հանդէս է եկել սեւամորթ երգչուհի Արլէ Տիցը, որին նուագակցել է ամուսինը՝ ռուս դաշնակահար, պրոֆեսոր Բ. Բ. Տիցը: Սեւամորթ երգչուհին ի թիւս ափրիկեան, հնդկացիական, Հեբրիդեան կղզիների բնիկների երգերի եւ Չայկովսկու ռոմանսների՝ կատարել է նաեւ Կոմիտասի «Գարուն Ա» երգը[131]: Նմանապէս աւելի քան հետաքրքիր մի պատկեր՝ կոմիտասեան երգը սեւամորթ երգչուհու շուրթերին 1930ականների Երեւանի նորաստեղծ ֆիլհարմոնիայում...

Հայ գրականութեան մէջ եւ շարժանկարում երբեմն ներկայացուել են սեւամորթ հերոսներ: Դեռեւս 1930ին նկարահանուած Ա. Դանիէլեանի՝ պիոներական ճամբարի առօրեան ներկայացնող «Առաջին Ճառագայթներ»ը կամ «Ա՜յ Քեզ Տղաներ» խաղարկային շարժանկարի հերոսներից է եղել մի սեւամորթ (դերակատար՝ Հ. Դանիէլեան)[132]: 1956ին Ստեփան Կէորկովն էկրանաւորել է Պ. Աբրահամսի *Ամպրոպի Արահետով* վէպը, որի գործողութիւնները կատարւում են ՀԱՀում եւ ներկայացնում են սպիտակամորթ աղջկայ եւ սեւամորթ երիտասարդի սիրոյ պատմութիւնը: Երեւանից դուրս ստեղծուել են ափրիկեան բնապատկերներ պատկերող տաղաւարներ, նկարահանուել են ոչ միայն հայ եւ ռուս դերասաններ, այլեւ ափրիկեցի ուսանողներ, որոնց մէջ՝ Մակոյի դերակատար Տիտօ Ռոմալիօն[133]:

Ստեփան Ալաջաջեանի *Անապատում* վէպի գործողութիւնները կատարւում են 1942ին լիբիական անապատներում. գործող անձինք են բրիտանական վաշտի զինուորները, որոնց մէջ է նաեւ հայորդի Տիգրան Արազեանը, ինչպէս նաեւ կամերունցի սեւամորթ Քոմօն: Վերջինիս մասին հեղինակը նշել է. *«Նա յարգանք է ունեցել եւ յարգանք ունի դէպի սպիտակները։ Սպիտակ ցե-*

*ղը ինչ-որ բարձր արարած է, այդպէս ասել են հենց իրենք՝ Կամերունի սպիտակները, այդպէս են ներշնչուել իրենք՝ նեգրերը, եւ նա հաւատում է այդ բանին. չէ՞ որ Կամերունում մի սպիտակ պահում է մի քանի նեգրի, կարող է այդ նեգրերին սպանել, ծեծել, աշխատեցնել ինչպէս սեփական հորթուկին, չէ՞ որ սպիտակները կարող են գրքեր կարդալ, գդալ են օգտագործում ճաշի համար, լաւ են հագնւում, իսկ ի՜նչ գեղեցիկ կանայք ունեն, ձիւնի պէս սպիտա՜կ»*[134]:

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայերի եւ սեւամորթների առնչութիւններն Ամերիկայի Միացեալ Նահանգներում (որի հայ գաղթականներին, ի դէպ, ժամանակին եանկիները սեւամորթների տեղ դրած՝ ենթարկել են ցեղային խտրականութեան): ԱՄՆում բնակուող նախկին հայաստանցիները տեղի ափրիկեան ծագումով բնակչութեան համար նոր բառ հնարեցին՝ «սեւական», մինչ արեւմտահայերէնում շարունակւում է գործածուել «խափշիկ» բառը: ԱՄՆի քաղաքացիական պատերազմի տարիներին (1861-1865) Լուիզիանա նահանգում բնակուել է հարուստ ագարակատէր Կիրակոսեանը: Նա ունեցել է սեւամորթ ստրուկներ, որոնց ազատութիւն է շնորհել: Սակայն հաւատարիմ ծառաները չեն ցանկացել լքել տիրոջը, շարունակել են ապրել նրա մօտ եւ կրել են նրա հայկական ազգանունը: Զարմանալի է, որ այդ սեւամորթների մօտ աւանդոյթ է դարձել իրենց զաւակներին հայկական անուններ տալը: 1950ին սեւամորթ Կիրակոսեանները բնակուելիս են եղել Փենինգ նահանգի Սենթ Հիլի շրջանում, Սենթ Լուիզ քաղաքում եւ Եուֆալա գիւղում: Սեւամորթ Պետրոս Կիրակոսեանի եւ խափշիկուհի Ջորջիանա Ուայթի զաւակները կոչուել են Խաչիկ, Հրանտ, Զաքար, Գարեգին, Անդրանիկ, Զաբէլ, Հայկանոյշ եւ Վերգինէ: Նրանց մասին պատմել է «Հայ Ազատ» ծածկանունով հանդէս եկող մի ամերիկահայ յօդուածագիր «Հայ անուն Կրող Խափշիկներ» յօդուածում[135]: Մի ամերիկահայուհի՝ Աստղիկ Սուրեանը, գրել է «Խափշիկ «Հայուհին», մի ամերիկացի սեւամորթուհու հետ իր հանդիպման մասին, որի մեծ հայրը հայ է եղել[136]:

1927ին 30ամեայ բեմադրիչ Ռուբէն Մամուլեանը (1898-1987) Նիւ Եորքի «Գիլդ» թատրոնում բեմադրել է Դիւբոուզ Հէյուրդի «Փորգի» պիէսը՝ արուեստի պատմութեան մէջ առաջին անգամ բեմ հանելով սեւամորթներից բաղկացած ոչ-պրոֆեսիոնալ մի դերասանակազմ: Լաւագոյնս ուսումնասիրած լինելով Չարլսթոնի սեւամորթների կեանքն ու կենցաղը՝ Մամուլեանին յաջողուել է ամենայն հարազատութեամբ վերարտադրել այդ մշակոյթն ամերիկեան բեմահարթակում: Ներկայացումը հսկայական յաջողութիւն է ունեցել եւ համարուել աննախադէպ երեւոյթ ամերիկեան թատրոնի պատմութեան մէջ: Ի՞նչն է սակայն յատկապէս նշանակալից տուեալ դէպքում. Մամուլեանի բեմադրութեան շնորհիւ ամերիկեան մտայնութեան մէջ նշմարուել է որոշ յեղաշրջում դէպի սեւամորթները, ամերիկացիները սկսել են համակրանքով եւ մարդավայել վերաբերուել նրանց հետ: Մամուլեանը բեմում ներկայացրել է արժանիքներ, որին մինչ այդ անհաղորդ էին մնացել սեւամորթներին վերից նայող սպիտակամորթները՝ նրանց ազգային ծէսերի գեղեցկութիւնը, երգ ու պարի իւրատեսակ թովչանքը, հոգեկան եւ մշակութային արժէքների ինքնատիպութիւնը: Սեւամորթներն իրենք էլ չէին կարող երախտապարտ չմնալ երիտասարդ հայորդուն, որը սիրային մի մելոդրամ կարողացել էր վերածել իրենց ազգային արժանապատուութիւնը շեփորող մի ասքի: Մամուլեանն իր բեմադրութեան լաւագոյն պարգեւը համարել է սեւամորթների անհուն սէրը եւ

նուիրուածութիւնն իր հանդէպ, որոնք հոգի չեն խնայել իր համար: Ինչպէս վկայել են բեմադրիչի ծնողները՝ «*Իւր խմբի սեւամորթները պաշտում են նորան ու անուանում են իւրեանց ազատարար: Աքանչելի է տեսնել այն յարգանքն ու սէրը, որով շրջապատուած է նա սեւամորթների կողմից*»[137]:

1970ականներին համայն աշխարհում մեծ հռչակ ձեռք բերեց սեւամորթ արձակագիր Ալեքս Հէյլիի *Roots* (Արմատներ) վէպը՝ ԱՄՆում սեւամորթների հանդէպ խտրականութեան մասին: Այն թարգմանուել է 17 լեզուներով, ներկայացուել հեռուստատեսութեամբ: Այդ ստեղծագործութիւնն արձագանգ է գտել նաեւ հայ իրականութեան մէջ, որպէս թերթօն, հատուածներ են տպագրուել Ստամբուլի *Մարմարա* օրաթերթում, Ռոբէր Հատտէճեանի թարգմանութեամբ, 1977 Յուլիսին: Ստեղծագործութեան ամերիկեան հեռուստաբեմադրութեան առթիւ ամերիկահայ հեղինակ Հռիփսիմէ Այվիսընը գրի է առել իր մտորումները. «*Այդ վայրկեանին, երբ դի-տում էի նկարը, ցանկութիւն ունէի ինձ մօտ նստած ունենալ մի սեւամորթ մամիկ: Ուզեցի ձեռքս դնել նրա ուսին, սեղմել նրան կրծքիս, սփոփելու համար եւ իրրեւ մխիթարանք բանալ նրա առաջ եթէ ոչ մեր հայոց պատմութեան անցեալի հատորները, այլ գոնէ 20րդ դարի դէպքերը, համեմատելու համար իրենց տառապանքը մերին հետ*»: Զուգահեռներ անցկացնելով հայոց եւ սեւամորթների պատմութեան մէջ՝ Այվիսընը շեշտում է, որ եթէ խափշիկների հանդէպ մեծագոյն անարդարութիւնն իրականացուել է ԺԷ.-ԺԸ. դարերում, ապա հայերի հանդէպ՝ «լուսաւորեալ» Ի. դարում: Նա բաղդատում է սեւամորթներին տուած նեգր անուանումը «գեաւուր»ի հետ, եւ ապա եզրակացնում է. «*Երանի՜ ձեզ, որ վերջապէս Ալեքս Հէյլի ունեցաք եւ պիտի ունենաք ուրիշ «Արմատներ», ուրիշ արդարութիւն որոնողներ: Երանի՜ ձեզ, որ կարողացաք ցուցադրել ձեր մեծ վիշտը աշխարհով մէկ, շահեցիք նոր բարեկամներ, նոր ցաւակցողներ, նոր համակիրներ*»:

Սակայն հայերը մնում են սպիտակամորթ, ուստիեւ 1994ին Լոս Անջելըսում տեղի ունեցած սեւամորթների խռովութիւնը չէր կարող չաւարտուել նաեւ հայ զոհով (մոլեռանդների կողմից իր տանը սպանուել է հայուհի Լուսին Մարոնեանը, եւ համապատասխան «զրոյց» է տեղի ունեցել հայ եւ սեւամորթների խմբաւորումների միջեւ): Անյաջողութեամբ է պսակուել Հայաստանում սեւամորթ ուսանողներ ունենալու հարցը, չնայած վերջին տարիներին սեւամորթ ֆուտբոլիստներ են սկսել հանդէս գալ Հայաստանի ֆուտբոլի տարբեր խմբերում:

Աշխարհի տարբեր երկրներում, Ափրիկէից բացի, յայտնի են հայերի հետ սեւամորթների հետ ամուսնութիւնների դէպքեր (ԱՄՆ, Ֆրանսիա, Եթովպիա, Շուեդիա): Ուշագրաւ է, որ այդ ընտանիքների մեծ մասը կարողանում է արտայայտուել հայերէն: Հայ գրականութեան դասականներ Լեւոն Շանթի եւ Մուշեղ Իշխանի՝ Ֆրանսիայում եւ ԱՄՆում բնակուող սերունդների մէջ կան մոլատներ[138]: Մէյրի Լու Աւագեանը առաջին հայ օրիորդն էր ԱՄՆում, որ 1968ին ամուսնացել է սեւամորթի՝ Մոնթերէյի Լեզուագիտական Դպրոցի շրջանաւարտ Գորդոն Ջեքսոնի հետ[139]: Հատուկենտ սեւամորթներ կարելի է հանդիպել նաեւ Հայաստանում (որդեգրուածներ կամ հայ մայր ունեցողներ), ինչպէս՝ դեռահաս Հրանտ Զաքարեանը, որ նկարահանուել է Տիգրան Խզմալեանի «Պիէռլեկինօ Կամ Օդից Թեթեւ» կինոնկարում, իր սեւամորթ քրոջ հետ հանդէս եկել հայկական երգերի կատարումներով, 2003ին թողարկել «Hrant+Gayane» խտասկաւառակը (Parseghian Records): Հայ-սեւա-

մորթ ձուլումի արդիւնք են նշանաւոր ֆրանսիացի կատակերգու Պասկալ Լեժիտիմուսը (ծն. 1959, Փարիզ), դուստրը անթիլցի Թէօ Լեժիտիմուսի եւ Մադլէն Քամպուրեանի, որ կապուած է ֆրանսահայ գաղութին, ամերիկեան կինոբեմադրիչ-օպերատորներ Ալէն եւ Ալբերտ Հագս երկուորեակ եղբայրները (ծն. 1972)՝ ծնունդով իրանահայ Աիդա Մկրտչեանի որդիները: Արդի ռուսագիր բանաստեղծ Կ. Ս. Ֆարայը (ծն. 1971, Մոսկուա), նոյնպէս ունի հայ-ափրիկեան ծագում: Նրա հայրը եղել է զիմբաբուէցի, մայրը՝ հայուհի, ռուսագիր բանասէր, բանաստեղծուհի Ելենա Ազիզեանը (1931-1984): Ֆարայը բնակուել է ՀԱՀում, այժմ՝ ԱՄՆում, զբաղւում է անգլօ-ամերիկեան բանաստեղծութեան ռուսերէն թարգմանութեամբ, *Լիմբ* ժամանակակից պոեզիայի հանդէսի գլխաւոր խմբագիրն է, հեղինակ է *Հրաժեշտ Կուռքերին* բանաստեղծութիւնների ժողովածուի:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ափրիկէ մայրցամաքը, բնակլիմայական եւ աշխարհաքաղաքական իր առանձնայատկութիւններով հանդերձ, միւս աշխարհամասերի նման հնագոյն ժամանակներից մինչեւ ԻԱ. դարի սկիզբը պարբերաբար գրաւել է հայ ժողովրդի ներկայացուցիչներին՝ ապահովելով հայկական փոքրաքանակ ներկայութիւն: Եթէ միջին դարերում հայերը հիմնականում յայտնւում էին Ափրիկէի հիւսիսում, ապա Ի. դարի սկզբից, տարբեր երկրների հայեր հաստատուել են ափրիկեան ամենատարբեր երկրներում՝ զբաղուելով հիմնականում առեւտրով եւ արհեստներով, ստեղծելով կարճատեւ գոյութեան դատապարտուած համայնքներ: Կարեւոր է նաեւ աշխարհի տարբեր երկրների հայ մասնագէտների մասնակցութիւնը ափրիկեան տարբեր պետութիւններում շինարարական, ճարտարապետական եւ գիտական ոլորտներում:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

Եգիպտոսի հայ գաղթավայրի պատմութեան վերաբերեալ առկայ է հարուստ գրականութիւն, ինչպէս՝ Նազարէթ Աղազարմ, *Նոթեր Եգիպտոսի Հայ Գաղութին Վրայ*, Գահիրէ, Զարեհ Ն. Պէրպէրեան, 1911. նաեւ՝ Ա. Գարտաշեան, *Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար*, Գահիրէ, Նուպար, 1943. նաեւ՝ Գ. Մնսըրլեան, *Ականաւոր Հայեր Եգիպտոսի Մէջ*, Գահիրէ, 1947. նաեւ՝ Արշակ Ալպոյաճեան, *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը եւ Հայերը*, Գահիրէ, 1960. նաեւ՝ Յ. Թոփուզեան, *Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1925)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1978. նաեւ՝ Նուպար Տէր-Միքայէլեան, *Եգիպտահայ Գաղութը 10-15րդ Դարերում*, Պէյրութ, Տօնիկեան, 1980: Եթովպիայի հայ գաղթավայրի մասին տե՛ս՝ Յակոբ Գրիգոր, *Եթովպիոյի Հայ Եկեղեցին եւ Հայերը. Քննադատական Ուսումնասիրութիւն*, Վենետիկ, 1927. նաեւ՝ Հ. Բաբաբան, *Արդի Եթովպիան եւ Հայ Գաղութը*, Վենետիկ, 1930. նաեւ՝ R. Pankhurst, "The History of Ethiopian-Armenian Relations: Ancient Times," *Revue des études arméniennes*, Paris, vol. 12, 1977, vol. 13, 1978-1979: Վերջին ժամանակներս Եթովպիայի եւ Սուդանի հայ համայնքների վերաբերեալ ուսումնասիրութիւններով հանդէս են եկել անգամ ռուս հետազօտողներ՝ Իրկուցկի *Diaspori* (Սփիւռքներ) անկախ գիտական ամսագրում (տե՛ս՝ Eleonora Lvova, "Armianskaia Koloniya v Efiopii (Po Materialam Polevykh Issledovaniy)" [Եթովպիայի հայկական գաղթավայրը. ըստ դաշտային հետազօտութեան նիւթերի], *Diaspori: Nezavisimiy Nauchniy Jurnal*, no. 1-2, 2000, էջ 160-167; V. Gusarov, "Zarisovki Iz Jizni Armianskoi Obshchini v Khartume (seredina 70-kh gg.)"

(Պատկերներ Խարբումի հայ համայնքի կեանքից [1970ականների կէսեր]), նոյն տեղում, էջ 167-172):

[2] Հրաչեայ Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, Երեւան, 2002, էջ 464-466:

[3] Աշոտ Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթականութեան Պատմութեան*, Հտր. Բ., Երեւան, Հայպետհրատ, 1967, էջ 97-98 :

[4] Կայիոսի Սալուստիոսի *Պատմութիւն Կատիլինեան Դաւակցութեան եւ Եուգուրթեան Պատերազմին*, թարգմ. Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, 1856, էջ 176-178: Տե՛ս նաեւ՝ ռուսերէն թարգմանութիւնը՝ Gayus Sallyustii Krisp, *Sochineniya* (Երկեր), Մոսկուա, 1981, էջ 50-51:

[5] Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 464-465:

[6] Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ Գաղթականութեան. Հայերու Յրտումը Աշխարհի Զանազան Մասերը*, Հտր. 1, Եգիպտոս, Սահակ-Մեսրոպ եւ Նոր Աստղ, 1941, էջ 383-384:

[7] *Մանր Ժամանակագրութիւններ*, XIII–XVIII դդ., կազմեց Վ. Ա. Յակոբեան, Հտր. 2, Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1956, էջ 74:

[8] Նոյն:

[9] Նոյն, էջ 97:

[10] «Հայ Գաղութը Լիպիոյ Մէջ», *Ասպարէզ*, 12.05.1964:

[11] *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1621-1640 Թուականներ)*, Հտր. Բ., կազմ. Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, 1978, էջ 149:

[12] *Մանր Ժամանակագրութիւններ*, Հտր. 1, էջ 274:

[13] Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 465:

[14] «Աւետիք Բաղդասարեան Ընթերցող Տիգրանակերտցի, Վասն Որ Կամի Ի Հէպէշին Երկիրն Գալ, Ասպէս Է», *Բազմավէպ*, 1897, թ. 10, էջ 459-463:

[15] Նոյն, էջ 463:

[16] V. A., Barbie Du Bocage, *De l'Introduction des Arméniens Catholiques en Algérie*, Paris, Amyot, 1855.

[17] Աճառեան, նոյն:

[18] Նոյն: Տե՛ս նաեւ՝ «Լիպիա. Ափրիկեան Տրիպոլիսի Հայերը», *Պայքար*, 23.07.1955:

[19] Սիսակ Յակոբ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Հտր. Ա., Պէյրութ, «Վանքէր», 1951, էջ 251:

[20] Մովսէս, «Հայ... Սուլէյման Քըրտահին», *Այգ*, 5.10.1968:

[21] Վահրամ Փափազեան, *Երկեր Հինգ Հատորով, Հտր. 1*, Երեւան, «Սովետական Գրող», Հրատ., 1979, էջ 126-128:

[22] «Հայ Զինուորի Մը Հերոսութիւնը Մարոքի Մէջ», *Հորիզոն*, 9.11.1913 (արտատպուած Պոլսի *Բիւզանդիոն*ից): Տե՛ս նաեւ՝ Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 466:

[23] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 853:

[24] Նոյն, գործ 855:

[25] *Ճակատամարտ*, 28.04.1922 :

[26] *Լուսարձակ*, 23.07.1924. նաեւ՝ Ալ. Մարտունի, *Կուսակցութիւնները Գաղութահայութեան Մէջ*, Թիֆլիս, Պետական Հրատարակչութիւն, 1924, էջ 44-45:

[27] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 856: Վարդանեանը կարեւոր տուեալ է յայտնել Իզմիրի հրդեհի մասին, գրելով. «*Պէտք է միշտ ուժգնօրէն հերքել ամէն տեսակ հրատարակութիւն, թէ հայերն են այրած Իզմիրը, տրուած ըլլալով, որ քեմալականները իրենց Ա. օրէն սկսան հայերը խողխողել եւ հազիւ հայեր իրենց թաքստոցները գտած կը պահուէին, յետոյ կրակը Քեմալի գրաւման 5րդ օրը պատահած ըլլալով անկարելի էր եւ հայ մը ոչ մէկ ատեն պիտի ուզէր իր բնակարանը ոչնչացնել։ Ատկէ մեծ սուտեր մ՚ալ* Frank. Bouillon *կ՚ընէ օրագրողներու յայտարա-*

*ըութեանց՝ յոյներու վրայ թողնելով կրակի հարցը։ Իզմիր լաւագոյն* Fire Brigade *մ՚ունենալով ուրիշ ատեններ երեք տունէ աւելի չէր այրեր, եւ այս անգամ 48 ժամ ուժանակ եւ* Benzine*ով կառավարութիւնը, անշուշտ քեմալական, ինք մասնաւոր ծրագրով մը այրեց։ Զմոռնամ ըսել, թէ ինքս* Alliance Francaise (*Իզմիր*) *ապաստանողներէն ըլլալով* Lucas Essayan *տան փաստաբան իտալացի* Ricchi, *իբր սոյն տան պաշտօնեան Կիրակի օրը եկան ինձ ըսել, թէ հայերու բնաջնջման ծրագիր կայ, քառորդ ժամ չմնաք եւ մեկնիք»*:

[28] Նոյն:

[29] Անցորդ, «Հայերը Քասապլանքայի Մէջ», *Արեւելք*, 22.12.1934:

[30] «Հայ Բարերար Մը», *Հայաստանի Կոչնակ*, 9.08.1941, էջ 787:

[31] «Հայերն Ալժերիի Մէջ», *Արմենիա*, 26.05.1915:

[32] «Նամակ Ալժերիէն», *Արմենիա*, 8.05.1918:

[33] «Ցիրուցան Հայեր Ալժերիոյ Մէջ», *Հայրենիք*, 25.08.1929: Նոյնը տե՛ս՝ *Եփրատ*, 24.08.1929:

[34] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 374, ցուցակ 1, գործ 13-15:

[35] «Հայերը Ալճերիոյ Մէջ», *Հայրենիք*, 30.07.1931:

[36] Սերովբէ Մխիթարեան, *Ֆրանսերէնով Արտայայտուող Հայ Արուեստագէտներ*, Փարիզ, Արաքս, 1969, էջ 302-303:

[37] Անշէն Որբուկ, «Նամակներ Ալճերիայէն. Հայկական Գաղութը», *Յառաջ*, 10.03.1931:

[38] Տե՛ս՝ «Երեք Շէն Գաղութներ. Մարոք, Ալժիրիա եւ Թունիս», *Ալիք*, 19.01.1936:

[39] «Ալճերիոյ եւ Թունուզի Հայերը», *Հայրենիք*, 28.01.1936: Ի դէպ, 2007ին շուշեցի մեքենավար Սուրէն Բաղդասարեանը անձնական զրոյցում մեզ յայտնել է, որ 1970ականների սկզբին, ծառայելով Եգիպտոսում տեղակայուած խորհրդային նաւատորմում, հնարաւորութիւն է ունեցել այցելել Ալժիրի եւ Թունիսի նաւահանգիստները եւ Բոն (ներկայումս՝ Անաբա) քաղաքում իրեն է մօտեցել տեղաբնակ մի հայ եւ ասել, որ ունի սեփական ոսկերչական խանութ:

[40] «Հայ Բարերար Մը»:

[41] «Ցանուցիր Հայեր Մարոքի Մէջ», *Հայրենիք*, 8.01.1936:

[42] «Հայերը Թունուզի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 27.08.1949, էջ 836:

[43] Թղթակից, «Գազապլանքայի Հայ Գաղութի Կեանքէն», *Ձայն Փարիզի*, 4.02.1949:

[44] Թեհլերեանի կենսագրութեան այս շրջանը մինչեւ վերջերս մնում էր անծանօթ, մինչեւ որ ի յայտ եկան Կասաբլանկայի երբեմնի բնակչուհի Պերճուհի Սիմոնեանի յուշերը, որը նա տրամադրել է 1990-1992ին Մարոկկոյում բնակուած Սեդա Գրիգորեանին: Տե՛ս՝ Արտակ Մաղալեան, «Մոռացուած Էջեր (Սողոմոն Թեհլերեանի Կեանքից)», *Դրօշակ*, 2004, թ. 4, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, էջ 75-79:

[45] Ժամանակին մամուլում աչքով ընկել են Արաքսի Վարուժանից բանաստեղծութիւններ, որոնք կրել են «Կասաբլանկա» նշումը:

[46] Տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ, գործ 875, ցուցակ 4, գործ 360, թիւ 2-4 :

[47] Արծուի Բախչինեան, *Հայազգի Գործիչներ Հնագոյն Ժամանակներից Մինչեւ Մեր Օրերը. Կենսագրական Բառարան*, Երեւան, Զանգակ-97, 2002, էջ 104-105:

[48] Վահան Համբարձումեան, *Գիւղաշխարհ*, Երեւան, Ամարաս, 2000, էջ 7: 2000ի Սեպտեմբերին Երեւանում հանդիպել ենք Միրէյ Համբարձումեանին, որը մեզ որոշ տեղեկութիւններ է յայտնել մարոկկահայ համայնքի մասին:

[49] «Հայերը Հիւսիսային Ափրիկէի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 27.10.1956, էջ 929:

[50] «Մարոքի Հայերը», *Ազդակ*, 22.09.1959: Աւելի վաղ նոյն *Ազդակ*ում տպագրուել էր, թէ այդ թուականին Մարոկկոյում բնակուել է մօտ հարիւր հայ ընտանիք (տե՛ս՝ «Հայերը Կը Պատուեն Քազապլանքայի Կառավարիչ Սի Ահմէտ Պարկաշը», *Ազդակ*, 14.07.1959):

[51] «Հայ Կռփամարտիկ Մը Ալճերիոյ Ախոյեան», *Հայաստանի Կոչնակ*, 26.08.1950, էջ 811 :

[52] http://www.thefitblog.net/2009/02/the-fit-blog-spotlight-sofia-boutella.html

[53] 1928ին նկարահանուած «Արեւմուտք» շարժանկարում Բագրատիդը կատարել է մարոկկացի էմիր Թայէբ ալ Հանիի դերը: Նկարահանումները կատարուել են Սահարայում, Մարակէշի շրջանում, որտեղ արաբական ցեղերից մէկի մարդիկ հայազգի դերասանին նմանեցրել են իրենց հակառակորդին եւ քիչ է մնացել սպանեն նրան («Պ. Տը Բագրատիդ Մեր Մէջ», *Կավռոշ*, 3.06.1928): Իսկ Աբէլ Գանսի «Արաբը» («Արաբների Կառավարիչը») շարժանկարի՝ Հիւսիսային Ափրիկէում նկարահանումների ժամանակ թուրք կառավարիչ Ռեքս Ինգրամի դերակատար Մաքս Մաքսուտեանին են մօտեցել մի քանի թուրքեր, որոնք դերասանին իրենց վալիի տեղն են դրել: Նրանք մի շնորհագիր են ներկայացրել Մաքսուտեանին՝ Անկարա ուղարկելու համար, եւ դերասանին չի մնացել անել ոչինչ, եթէ ոչ լրջօրէն վերցնել թուղթը ու դնել գրպանը (*Mon Ciné*, Paris, 31.12.1925, տե՛ս՝ «Դերասան Մաքսուտեան», *Արագած*, Փարիզ, 1-15.01.1926, էջ 12):

[54] Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը*, Պէյրութ, 1989, էջ 83:

[55] «Մեր Արուեստագէտներն ու Մտաւորականները Արտասահմանի Մէջ», *Անահիտ*, 1930, Մայիս-Յունիս, թիւ 1, էջ 126:

[56] Արծուի Բախչինեան, *Հայերը Համաշխարհային Կինոյում*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Հրատարակչութիւն, 2004, էջ 420:

[57] Նոյն, էջ 372:

[58] Մխիթարեան, *Ֆրանսերէնով Արտայայտուող*, էջ 159:

[59] Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բառարան*, Հտր. Ա., Երեւան, «Հայաստան» Հրատ., 1973, էջ 36:

[60] «Թունուզ», Լեւոն Քեշիշեանի Նոր Ժապաւէնը», *Ասպարէզ*, 8.05.1964:

[61] Անձնական ել-գիր, 15.03.2009:

[62] «Լիպիա. Ափրիկեան Տրիպոլիսի Հայերը», *Պայքար*, 23.07.1955:

[63] «Հայ Գաղութը Լիպիոյ Մէջ»:

[64] Հայաստանի Ազգային Արխիւ, գործ 362, ցուցակ 13, գործ 54 [էջ 9բ]:

[65] Թորոս Թորանեան, «Առօրեայ Խօսակցութիւն», *Նոր Օր*, 9.12.2006:

[66] Թորոս Թորանեան, *Ուղեւորութիւն Դէպի Թայլանտ ու Չինաստան*, Հալէպ, Կիլիկիա, 2004, էջ 47:

[67] Անձնական ել-գիր, 6.11.2008:

[68] Armenian ambassador to Morocco handed copies of credentials to Moroccan FM, Pan Armenian 31.10.2005 23:39 GMT+04:00 (PanARMENIAN.Net), տե՛ս նաեւ՝ http://www.armtown.com/news/am/pan/20051031/15252/
Մեր օրերում Մարոկկոյի հայերի մասին մի բոլոր տեղեկութիւն ենք հանդիպել ֆինլանդաբնակ նկարիչ Արամայիս Աւետիսեանի՝ հայ մամուլին տուած հարցազրոյցում: Մարոկկոյի Կասաբլանկա քաղաքում ֆինն նկարիչների ցուցահանդէսին նրան է մօտեցել Մարոկկոյում Եւրոմիութեան ներկայացուցիչը եւ հետը խօսել վարժ արեւմտահայերէնով, յետոյ կարդացել Սիամանթոյի եւ Վարուժանի բանաստեղծութիւնները: Ապա նրանց զրոյցին է միացել մէկ ուրիշը եւ յայտնել, որ ինքն էլ ֆրանսահայ է (Ռուբէն Հայրապետեան, «Յանկարծ Գիւմրիում Չիմանան», *Ազգ*, 21.09.2007):

[69] Ղուկաս Վանանդեցի, *Գանձ Չափոյ, Կշռոյ, Թուոյ եւ Դրամից Բոլոր Աշխարհի*, Ամստերդամ, 1699, էջ 55-56:

[70] Philip D. Curtin, *Cross-Cultural Trade in World History*, Cambridge University Press, 1994, էջ 200:

[71] Զոհրաբ Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատարակչութիւն, 2003, էջ 351:

[72] Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, էջ 473-474:

[73] Ե. Գ. Աղաթօն, «Ո՞վ է Երուանդ Յակոբեան եւ Ի՞նչպէս Բարերար Անդամ Եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան», *Միութիւն*, 1913, թ. 14, էջ 41. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Կեանքիս Յուշերից*, Երեւան, «Միտք», 1967, էջ 39-40:

[74] Լէօն Սապոնճեան, *Իսթանպուլահայ Սքաուտի Մը Հետիոտն եւ Արկածախնդրական Շրջապտոյտը*, ֆրանսերէնէ թարգմանեց՝ Թ. Գառնիկ, Կ.Պոլիս, Տողու, 1956:

[75] «Քենիայի Հայերը», *Նոր Աշխարհ*, 6.05.1967:

[76] Թէոդիկ որդի, «Հարաւային Ափրիկէի Հայերը», *Հայաստանի Կոչնակ*, 22.01.1944, էջ 82-83, 29.01.1944, էջ 107-109:

[77] «Նիկերիոյ Հայ Գաղութը», *Հայաստանի Կոչնակ*, 9.06.1951, էջ 549:

[78] Սուրէն Ա. Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ Գաղութը*, Պէյրութ, Լա Ֆոթօ-բրէս, 1958:

[79] Նոյն ժամանակահատուածում սփիւռքահայ մամուլն էլ վկայել է, որ Նիգերիայում 1928ին 2000 սպիտակամորթ բնակչութեան մէջ եղել է ընդամէնը երեք հայ (տե՛ս՝ «Ցիրուցան Հայեր. Երեք Հոգի Ալ՝ Նիկերիա», *Յառաջ*, 23.06.1928):

[80] Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ*, էջ 115:

[81] Մովսէս Խեչօ, «Մանուէլը՝ Լագոսից», *Առաւօտ*, 2.04.2009:

[82] «Լուրեր Քենիայէն», *Հայաստանի Կոչնակ*, 27.08.1955, էջ 837. նաեւ՝ «Հայերը Քենիայի Մէջ», *Պայքար*, 2.11.1955:

[83] Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ*, էջ 12:

[84] Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», նոյն:

[85] Արտատպութիւնը տե՛ս՝ *Զարթօնք*, 27.08.1981, նաեւ՝ *The Armenian Reporter*, 28.08.1980.

[86] Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», էջ 352:

[87] Յակոբ Վարդիվառեան, «Ապիճանը Իր Հայութեամբ», *Զարթօնք*, 15.11.1995: Նոյնը տե՛ս անգլերէն՝ "Abidjan With Its Armenians," *The Armenian Reporter*, 1.09.1999:

[88] Narciso Binayan Carmona, *Entre el Pasado y el Futuro: Los Armenios en la Argentina*, Buenos Aires, 1996, էջ 48:

[89] Յովսէփ Խուրշուդեան, «Սփիւռքահայ Գաղթօջախների եւ Համայնքների Կապիտալի, Ինովացիոն-Տեխնոլոգիական եւ Մտաւոր Ներուժի Հաշուառում, Քարտէզագրում եւ Դասակարգում», *Հայաստան 2020. Զարգացման եւ Անվտանգութեան Ռազմավարութիւն*, Երեւան, 2002, էջ 365:

[90] Լ. Քափսթիքդէյլ, «Հայերը Հարաւային Ափրիկէի Մէջ», *Զարթօնք*, 27.08.1981:

[91] «Հայ Գաղութ Մը Հարաւային Ափրիկէի Մէջ», *Յառաջ*, 7.09.1957: Մաու Մաու շարժումը սկիզբ է առել Քենիայում 1950ականներին, որի գլխաւոր նպատակն էր երկրից հեռացնել բրիտանական կառավարումը եւ եւրոպացի բնակիչներին:

[92] G. Vardanian, «Iz Amerikanskoy Jizni» (Ամերիկեան կեանքից), *Russkaya Misl*, 17.08.1961.

[93] Վարդիվառեան, «Ապիճանը» :

[94] Վարդիվառեան, «Ապիճանը»: Ի դէպ, Խորհրդային Միութեան ժամանակա-շրջանում սեւամորթ Ափրիկէի երկրներում աշխատել են մի շարք հայ մասնագէտներ՝ բժիշկներ, գիտնականներ, արուեստագէտներ: Երբեմն աֆրիկեան երկրներում անց են կացուել ԽՍՀՄ օրեր՝ Հայկական ԽՍՀ օրինակով: 1983ին Մադագասկարում կազմակերպուել են երեւանեան օրեր, ներկայացուել են Հայաստանը պատկերող լուսանկարներ, ցուցադրուել են Երեւանի Մանկական Պատկերասրահի աշխատանքներից (տե՛ս՝ «Տաք, Ջերմ Օրեր Անտանանարիվուլում (sic)», *Սովետական Արուեստ*, 1983, թ. 12, էջ 50): 1989ին հայաստանեան օրեր են կազմակերպուել Ան-

գոլայում եւ Կոնգոյում: Հայաստանեան պատուիրակութեան մէջ եղել են մշակոյթի գործիչներ, ներկայացուել է «Հայաստան. Երկիրը եւ Մարդիկ» լուսանկարչական ցուցահանդէսը, նկարչուհի Լաւինիա Բաժբէուկ-Մելիքեանի ցուցահանդէսը, «Ափրիկէն Հայ Երեխաների Աչքերով» ցուցահանդէսը, գորգեր, ասեղնագործութիւն, ելոյթներ է ունեցել «Երեւան» ջազ համոյթը: Երեխաների 10 աշխատանք նուիրուել է Կոնգոյի կառավարութեանը: Միջոցառումներին ներկայ են եղել նաեւ Կոնգոյում բնակուող հայերը («Հայկական Օրեր Ափրիկէում», *Հայրենիքի Ձայն*, 27.12.1989):

[95] Յակոբ Վարդիվառեան, «Հայոց «Կռունկ»ները Ապիճանէն... Փարիզ», *Ապագայ*, 9.09.1991:

[96] Վարդիվառեան, «Ապիճանը»:

[97] Յակոբ Վարդիվառեան, «Արեւմտեան Ափրիկէի Ջաղացպան Հայը», *Նոր Մարմարա*, 6.07.1988:

[98] Վարդիվառեան, «Ապիճանը»:

[99] Բախչինեան, *Հայազգի*, էջ 104:

[100] «Մոնրովիայի Հայ Գոհարավաճառին Նուէրը Հանրապետութեան Նորընտիր Նախագահին», *Այգ*, 14.11.1971:

[101] Քափսքիքդէյլ, «Հայերը Հարաւային»:

[102] «Եղեռնի Քարտէսագիր Էօճիւրեան», *Հորիզոն*, 23.03.1987:

[103] «Հայ Պրոֆեսորը՝ Ափրիկեան 8 Երկրների Վիրաբուժական Կազմակերպութեան Նախագահ. Հարցազրոյց Պրոֆ. Գրիգոր Երզնկացեանի Հետ», վարեց Յակոբ Ծուլիկեանը, *Ազգ*, 12.07.2007:

[104] Տե՛ս՝ նրա «Պարտէզիս Թառամած Ճաղիկները» բանաստեղծութիւնը, *Նոր Օր*, 6. 05.1969:

[105] «Հայ Բանաստեղծ Մը Ի Մադագասկար», *Հայաստանի Կոչնակ*, 1968, էջ 358: Մադագասկարում հայերի բնակութեան մի լրացուցիչ ապացոյց է Ստեփան Ալաջաջեանի «Մայրիկի Համար» պատմուածքը, որը ներկայացնում է Մադագասկարին մերձ Կոմորէզ կղզում ապրող երկու հայերի՝ Մարկոս-Մարկին եւ Թովմասին (տե՛ս՝ Ստեփան Ալաջաջեան, *Մաղէնն Ապրում Է Փարիզում*, Երեւան, Հայաստան Հրտ., 1975, էջ 64-71):

[106] Քափսքիքդէյլ, «Հայերը Հարաւային»:

[107] Անձնական էլեկտրոնային նամակ Փոլ Հայկ Փամպուքեանից, 25.11.2007:

[108] «Արշակ Ժաք Մուրատեան Նոր Հեպրիտեան Կղզիներու Կառավարիչ», *Ջահակիր*, Կահիրէ, 24.11.1966:

[109] Տ. Ճ. Միսաքեան, «Արդիական Ճարտարապետութեան Վարպետ Մը. Գէորգ Արսէնեան», *Յառաջ*, 11.08.1954:

[110] Բախչինեան, *Հայազգի*, էջ 208:

[111] Արամ Սեփեթճեան, *Ես Սեւ Եմ Բայց Գեղեցիկ*, Պէյրութ, Տպարան Ջարթօնք, 1985:

[112] Հայկ Նազգաշեան, *Ափրիկեան Անտառներուն Մէջ*, Երեւան, Սովետական Գրող, 1982: Այս հատորի բնօրինակը հրատարակուել է է Բէյրութում, 1979ին՝ *Որսորդի Ուղիներով*: Նազգաշեան հրատարակել է նաեւ նման բնոյթի մի այլ հատոր՝ *Մարկերիթայի Առիւծները*, Բէյրութ, 1981ին:

[113] Բախչինեան, *Հայազգի*, էջ 71:

[114] Նոյն, էջ 40:

[115] Ա. Խրիմեան, «Մադագասկարի Շքանշանը», *Սովետական Հայաստան*, 1986, p. 2, էջ 7:

[116] An Architect and Artist from the Middle East Call Sweden "Home," *AGBU*, volume 10, no 1, February 2000, p. 6.

[117] http://opionteke.narod.ru/gayana.html

[118] Վ. Տատոմեանց, «Քոլոնիացիան Նեգրերի Մէջ», *Հայրենիք*, 8.02.1936:

[119] "Carole Sarkisian Speaks at Negro Conference in Florida", *Լրաբեր*, 9.07.1963:

[120] Բախչինեան, *Հայազգի*, էջ 275:
[121] *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հատոր 6, Երեւան, 1979, էջ 20:
[122] *Ոսկէ Ծիրան. Երեւանի Հինգերորդ Միջազգային Կինոփառատօն, 13-20 Յուլիս, 2008. Կատալոգ*, Երեւան, 2008, էջ 19:
[123] Ըստ ՀԱՀի հայերի հետ ունեցած ելեկտրոնային նամակագրութեան:
[124] Ըստ նրանց պաշտօնական կայքէջի՝ http://www.armeniansa.co.za/ կազմակերպութիւնն ունի հետեւեալ վարչական մարմինը՝ Մարթին Սուսմայեան (նախագահ), Գուրգէն Ճաղլասեան (փոխնախագահ), Վիգէն Տէր-Սարգսեան (գանձապահ), Էրիք Գայայեան, Վլադիմիր Յակոբեան, Էդուարդ Սիրականեան եւն.:
[125] "Armyanin, On i V Afrike Armyanin" (Հայը նաեւ Ափրիկէում է հայ), *Novoye Vremya*, 16.11.2001.
[126] Bling-bling Boys From Abroad; Kenya. (Armenians Deported From Kenya), *The Economist* (US), June, 2006, տե՛ս՝ http://findarticles.com/p/articles/mi_hb5037/is_200606/ai_n18252302.
[127] Միքայէլ Մանուէլեան, «Նեգրը», *Գեղարուեստ*, 1911, թ. 4, Թիֆլիս, էջ 112:
[128] Van Baiburt, "An African in Tbilisi", *Armenian Mirror-Spectator*, 12.01.1985.
[129] Արտաշէս Կարինեան, «Նեգրերի Գրականութիւնը (Ռընէ Մարան, «Բատուալա», վէպ)», *Պայքար*, 1923, թ. 1, էջ 4-5:
[130] «Ինչպէս է Ապրում Նեգր Երիտասարդութիւնը. Սեւամորթ Կոմերիտական Ընկ. Ջոնսոնի Յօդուածը», *Աւանգարդ*, 9.07.1927:
[131] «Երգչուհի Արլէ Տիցի Համերգները», *Խորհրդային Արուեստ*, 1935, թ. 4, էջ 12:
[132] *Հայկական Կինո 1924-1999. Լիակատար Կատալոգ*, Երեւան, Արտագերս, 2000, էջ 11:
[133] Նոյն, էջ 19:
[134] Ստեփան Ալաջաջեան, *Երկեր Երեք Գրքով, Գիրք 1*, Երեւան, Սովետական Գրող, 1976, էջ 38:
[135] *The Armenian Mirror-Spectator*, 11.08.1951:
[136] Աստղիկ Սուրեան, «Խափշիկ «Հայուհին», *Հայաստանի Կոչնակ*, 18.07.1942, էջ 986:
[137] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 395, ցուցակ 1, գործ 77, վաւերագիր 10:
[138] Ըստ այդ անձանց անձամբ ճանաչած մարդկանց կողմից կատարուած բանաւոր վկայութիւնների:
[139] «Միացեալ Նահանգներու Մէջ Առաջին Հայ Օրիորդը Ամուսնացաւ Սեւամորթի Մը Հետ», *Արեւ*, 12.04.1968:

# THE ARMENIANS IN NORTHERN, CENTRAL AND SOUTH AFRICA

(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

The article is a compilation of data and information about Armenian travelers, inhabitants and communities in Northern, Central and Southern Africa, a change from the history of Armenians in African countries like Egypt, Ethiopia and Sudan, which are relatively better researched.

The first evidence of the Armenian presence in Africa is in the Jugurthine War (between Rome and Numidia) in 115-105 B.C., when Armenian soldiers remained in Northern Africa and participated in the formation of the Moor nation. In the early Middle Ages several Armenian military figures from the Byzantine Empire led military operations in Northern Africa.

During the medieval period a few Armenians appear occasionally in various parts of the African continent. The first Armenian settlements in Algeria and Libya are dated in the 1880s. Groups of Armenian survivors from the genocide in the Ottoman Empire in 1915-1922 settled in Algeria, Tunisia and Morocco, after arriving there by sea. In 1955-1956 there were 80 Armenian families (about 400 people) in Morocco, 120 families (circa 500 people) in Algeria, 25 families (around 80 people) in Tunisia and 70-80 families in Libya.

At the beginning of the 20th century some Armenians settled in different parts of "black" Africa. Some of the ethnic Zairians belonged to the Armenian Apostolic Church. Large Armenian communities existed in Nigeria and South Africa.

Generally, the Armenians were involved in business, trade and crafts. Armenian artists and intellectuals contributed to the growth and development of local architectural, public health and scientific activities in diverse African states.